«ԿԱՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ» ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑ

Երևան
2023

Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակության շրջանում հանրային հաշվետվողականության ապահովման մեխանիզմների ամրապնդման ՍԱՆԿՈՒՍ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի (ԹԻՀԿ) կողմից:

Զեկույցի բովանդակությունը բացառապես «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությանն է և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Մոնիտորինգային թիմն իր երախտագիտությունն է հայտնում ընտրված դպրոցների տնօրեններին, գնումների համակարգողներին, գնումների գնահատող հանձնաժողովների անդամներին, ծնողներին, պետական լիապոր մարմինների ներկայացուցիչներին՝ համագործակցության և մոնիտորինգի իրականացման ընթացքում ցուցաբերած աջակցության համար:

Funded by the European Union

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ հակակոռուպցիոն կենտրոն

ՀԱՐԹԱԿ Հետազոտական Կենտրոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7

Մոնիտորինգի նպատակը 8

Խնդիրներ 8

Մեթոդներ 9

Ընտրանքի ձևավորման հիմքերը 11

Հետազոտության ընթացքում ծագած դժվարություններ 12

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 14

1. Ընդհանուր տեղեկություններ դպրոցներում տրվող անվճար սննդի վերաբերյալ 14

2. Սովորողների և ծնողների բավարարվածությունը դպրոցում մատուցվող անվճար սննդից 17

3. Դպրոցում մատուցվող անվճար սննդի որակի և քանակի գնահատում 21

4. Ծնողական ներդրումային գումար 27

5. Դպրոցների խոհանոցների և ճաշասենյակների սանիտարահիգիենիկ պայմանների գնահատում 32

6. Դպրոցներում սննդի պատրաստման, պահպանման և սովորողներին մատուցելու պայմանների գնահատում 33

7. Սննդամթերքի գնումների գործընթացի իրականացման վերլուծություն 35

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 44

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 45

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Մոնիտորինգի ընթացքում կիրառված մեթոդներն ու թվային տվյալները 9
Աղյուսակ 2. Մոնիտորինգի համար ընտրված դպրոցների ցանկ 12
Աղյուսակ 3. Երեխաների կողմից նախընտրելի և ոչ նախընտրելի կերակրատեսակներն ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցումների 19

Գծապատկեր 1. Հարցման մասնակիցներն ըստ մարզերի և համայնքների (թվային տվյալներ) 11
Գծապատկեր 2. Ծրագրի շահառուների թիվն ըստ մարզերի..... 15
Գծապատկեր 3. Տարրական դասարանների և «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում ներառված դպրոցների թվաքանակն ըստ մարզերի..... 15
Գծապատկեր 4. Կառավարության կողմից ծրագրի համար հատկացված ֆինանսական միջոցներն ըստ մարզերի (2022 թվական) 16
Գծապատկեր 5. Դպրոցական սննդից օգտվող երեխաների թիվն՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման 18
Գծապատկեր 6. Դպրոցական սննդով երեխաների կշտանալու վերաբերյալ արդյունքներն՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ) 22
Գծապատկեր 7. Երկրորդ չափաբաժին պահանջելու վերաբերյալ թվային տվյալներ՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)..... 23
Գծապատկեր 8. Երեխայի հետ դպրոց հավելյալ սնունդ ուղարկելու վերաբերյալ թվային տվյալներ՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)..... 24
Գծապատկեր 9. Դպրոցից դուրս սնունդ գնելու վերաբերյալ թվային տվյալներ՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)..... 25
Գծապատկեր 10. Ամսական հավելյալ սննդի համար ծախսվող գումարի և սնունդը գնելու համար առավել նախընտրած վայրերի վերաբերյալ թվային տվյալներ 26
Գծապատկեր 11. Յուրաքանչյուր ամիս դպրոցական սնունդ ծրագրի համար կատարված ներդրումներն՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ) 28
Գծապատկեր 12. Ծնողական ներդրումային գումարների պահպանումն ըստ ծնողների շրջանում իրականացված հարցման (թվային տվյալներ)..... 28
Գծապատկեր 13. Ծնողական ներդրումային գումարների տնօրինումն ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)..... 29
Գծապատկեր 14. Ծնողական ներդրումային գումարների ծախսային ուղղություններն ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)..... 31

Քարտեզ 1. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի մեկնարկն ըստ տարեթվերի և մարզերի 14
Քարտեզ 2. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հանձնումն ազգային ծրագրին ըստ տարեթվերի և մարզերի..... 14

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԴՍԵԲ	Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԶՆԱԿ	Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊՀԾ	Պարենի համաշխարհային ծրագիր
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍԱՏՄ	Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական սննդի ծրագիրն ամբողջ աշխարհում ամենամեծ տարածումն ունեցող ծրագրերից է, որից օգտվում է 388 մլն երեխա 161 երկրից:[1] Դպրոցական առողջության և սնուցման քաղաքականության նպատակն է պաշտպանել և խթանել դպրոցական համայնքի առողջությունը, սնուցումը, բարեկեցությունը, ֆիզիկական, հուզական և սոցիալական զարգացումը և առավելագույնի հասցնել կրթական արդյունքները բոլոր երեխաների համար:

2010 թվականից ծրագիրն իրականացվում է նաև Հայաստանի Հանրապետությունում՝ նպատակ ունենալով ստեղծել դպրոցական կայուն սննդի համակարգ և ապահովել Հայաստանի բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը, բարելավել նրանց առողջությունն ու հաղթահարել աղքատությունը՝ նպաստելով դպրոցականների հաճախելիության բարձրացմանն ու համընդհանուր տարրական կրթության ձեռքբերմանը:[2]

Շիրակի և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցներում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի մոնիտորինգն իրականացվել է «Հարթակ» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպության կողմից «Քաղաքացիական հասարակության շրջանում հաշվետվողականության մեխանիզմների ամրապնդում (ՍԱՆԿՈՒՍ)» ծրագրի շրջանակներում՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) աջակցությամբ և Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Մոնիտորինգի նպատակն է ուսումնասիրել Տավուշի և Շիրակի մարզերի ութ դպրոցում սննդի կազմակերպումը, գնումների ընթացակարգը, դիտարկել մատուցված սննդի ու փաստացի գնումների համապատասխանությունն ու սննդի հասանելիությունը: Մոնիտորինգի ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվել դպրոցում մատուցված սննդից երեխաների և ծնողների բավարարվածությանը, սննդի որակին և քանակին, դպրոցների ճաշարանների և խոհանոցների սանիտարահիգիենիկ պայմաններին, սննդի պատրաստման ու պահպանման պայմաններին: Ուսումնասիրվել են սննդամթերքի ձեռքբերման գնումների գործընթացը, ծնողական ներդրումային գումարների հավաքագրման, տնօրինման մեխանիզմները և ծախսային ուղղությունները:

Մոնիտորինգի ընթացքում տվյալների հավաքագրման նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Շիրակի և Տավուշի մարզպետարաններ, թիրախային դպրոցներ, իրականացվել է փաստաթղթերի վերլուծություն, կազմակերպվել են խորացված հարցազրույցներ ընտրված դպրոցների տնօրենների, գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների անդամների, գնումների համակարգողների, ԿՀՆԱԿ հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» (այսուհետ՝ ԴՍԵԲ) հիմնարկի ներկայացուցչի հետ: «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրից օգտվող երեխաների ծնողների հետ իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ և առցանց հարցումներ, երեխաների ճաշի ժամին անցկացվել են դիտարկումներ դպրոցների ճաշարաններում և խոհանոցներում:

---

[1] "Ready to learn and thrive: school health and nutrition around the world", UNESCO, United Nations Children's Fund, World Food Programme, 2023, page 24, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000384421 (դիտված՝ 12.04.2023)

[2] «Մեկնարկել է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի նոր փուլը», Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Երևան, մարտ 2020, http://escs.am/am/news/6151 (դիտված՝ 12.04.2023)

Մոնիտորինգի իրականացման նպատակով կազմվել են խորացված հարցազրույցի հարցաշարեր, դպրոցների ճաշարանների և խոհանոցների, սննդի կազմակերպման ընթացքի դիտարկման քարտեր և կիսաձևայնացված հարցաթերթեր:

Մոնիտորինգն իրականացվել է Շիրակի և Տավուշի ութ դպրոցում՝ 2022 թվականի սեպտեմբերից 2023 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի նկարագրություն

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրն իրականացվում է 2010 թվականից ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (այսուհետ՝ ՊՀԾ) համագործակցությամբ՝ Ճյուղային սննդի ինստիտուտի (SIFI) տեխնիկական և Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսական աջակցությամբ: Ծրագիրն ուղղված է ՀՀ մարզերում դպրոցների տարրական դասարաններում սովորող երեխաների համար մեկանգամյա բալանսավորված, տաք կամ չոր սննդի տրամադրմանը, ինչպես նաև հասանելի և կայուն դպրոցական սննդի ազգային ծրագրի ստեղծմանը: 2014 թվականից ՀՀ մարզերում ծրագրի կառավարումն ու ֆինանսավորումը փուլային տարբերակով ՊՀԾ-ից փոխանցվում է ՀՀ կառավարությանը: Վայոց Ձորում, Սյունիքում, Արարատում, Տավուշում, Շիրակում, Արագածոտնում, Գեղարքունիքում, Լոռիում և Արմավիրում ծրագիրն արդեն իսկ գործում է ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ: Կոտայքի դպրոցներում սննդի կազմակերպման փոխանցումը ՀՀ կառավարությանը նախատեսված է 2023թ.-ին:

Վերոնշյալ ինը մարզերում կառավարության կողմից ֆինանսավորվող դպրոցներում սննդի կազմակերպման ողջ գործընթացը վերապահված է դպրոցներին, ինչը ենթադրում է սննդամթերքի գնման գործընթաց, սննդի պատրաստում, պահպանում, մատուցում, ճաշարանի և խոհանոցի սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, սննդի որակի և անվտանգության ապահովում: Լիազորությունների այս շրջանակը դպրոցների համար առաջ է բերում գործընթացի կազմակերպման ընթացքում ռեսուրսների տնօրինման բարձր պատասխանատվություն, մատակարարների համար մրցակցային հավասար պայմանների ապահովման պարտավորություն:

Դպրոցներում սննդի հասանելիությունն ավելի է կարևորվում համընդհանուր ներառականության անցման պայմաններում: 2014 թվականի դեկտեմբերի 1-ին Ազգային ժողովում ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով[3] նախատեսվում է անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համակարգի ներդրումը նախատեսված է իրականացնել մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը: Ներառականության անցում կատարած դպրոցներում, ի թիվս այլ հիմնախնդիրների, կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաները առնչվում են նաև սննդի հասանելիության հետ կապված խնդիրների՝ դպրոցների ճաշարանների ոչ լիարժեք հարմարեցվածության պատճառով: Սննդի հասանելիության խնդիրն առկա է նաև ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների շրջանում. տարրական դասարաններում սովորող ոչ բոլոր աշակերտներն են օգտվում դպրոցական սննդից, և ծնողները ստիպված են երեխաների հետ սնունդ կամ գումար ուղարկել դպրոց:

Դպրոցական սննդի կազմակերպման համար ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարի հրամանով յուրաքանչյուր երեխայի մեկ օրվա սննդի համար նախատեսված է 151 դրամ,[4] մինչդեռ դպրոցում սննդի կազմակերպման համար

[3] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք, ընդունված 1 դեկտեմբերի 2014թ., հոդված 21, 4-րդ կետ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683 (դիտված՝ 12.04.2023)

[4] Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, N 04-Ն հրաման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Հանրակրթություն» ծրագրի «Տարրական ընդհանուր հանրակրթություն» և «Նախադպրոցական կրթություն» միջոցառումների շրջանակում սովորողներին սննդի

երեխաների ծնողները հավաքում են լրացուցիչ գումար, ինչն առաջացնում է մտահոգություններ դրա չափի, տնօրինման և ծախսի նպատակահարմարության առնչությամբ:

Դպրոցական սննդի կազմակերպման շրջանակներում առանցքային կարևորություն ունեն դպրոցների ճաշարանների և խոհանոցների սանիտարահիգիենիկ, ինչպես նաև, սննդի պատրաստման ու պահպանման պայմանները: Տարբեր ժամանակահատվածներում Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կողմից մի շարք դպրոցների հանրային սննդի օբյեկտների արտադրական գործունեությունը կասեցվել է սանիտարահիգիենիկ պայմանների անբավարար վիճակի պատճառով:[5] Մոնիտորինգի իրականացման ընթացքում նման դեպք արձանագրվեց նաև Շիրակի մարզի երկու դպրոցում:[6]

Այս հիմնահարցերը գտնվել են մոնիտորինգ իրականացնող թիմի ուշադրության կենտրոնում: Կիրառված մեթոդաբանությունն օգնել է հաստատել կամ հերքել նշված հիմնախնդիրների գոյությունը և/կամ դրանց հնարավոր պատճառները:

Մոնիտորինգի նպատակը

Շիրակի և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցներում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի մոնիտորինգի նպատակն է ուսումնասիրել նշված մարզերի ութ դպրոցում սննդի կազմակերպումը, գնումների ընթացակարգը, դիտարկել մատուցված սննդի ու փաստացի գնումների համապատասխանությունն ու սննդի հասանելիությունը:

Խնդիրներ

Մոնիտորինգի նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

1. **Դպրոցում տրվող անվճար սննդին առնչվող ընդհանուր խնդիրներ.** պարզել տարրական դասարանների երեխաներին մատուցվող ճաշացանկը, ծնողների տեղեկացվածությունը ճաշացանկում օգտագործվող թույլատրվող և չթույլատրվող մթերքների վերաբերյալ և հավաքագրել ծնողների առաջարկները դպրոցում սովորողների սննդի որակի և ծառայությունների բարելավման համար:
2. **Սննդից երեխաների և ծնողների բավարարվածություն.** պարզել ծնողների և երեխաների բավարարվածությունը դպրոցական սննդից, երեխաների նախընտրելի և ոչ նախընտրելի կերակրատեսակները, սննդից երեխաների հրաժարման հաճախականությունը և պատճառները, թունավորման հնարավոր դեպքերը:
3. **Սննդի որակ և քանակ.** դիտարկել սննդի համապատասխանությունը սահմանված ճաշացանկին, օգտագործված մթերքները, սննդի որակը, պատրաստված սննդի քանակի համապատասխանությունը երեխաների թվին, պարզել սննդի բաշխման ընթացքը, երկրորդ չափաբաժին պահանջելու դեպքերը, հավելյալ սնունդ դպրոց

կազմակերպման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվարկման նորմատիվները հաստատելու կարգի մասին, ընդունված 26 հունվարի 2022 թ., 4-րդ կետի 1-ին ենթակետ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159794, (դիտված՝ 12.04.2023)

[5]«Արտաշատի 3-րդ դպրոցի ճաշարանի և խոհանոցի գործունեությունը կասեցվել է», Իրազեկ.am, 18 հոկտեմբերի 2019թ., https://www.irazek.am/hy/news/12713, (դիտված՝ 12.04.2023)

[6]«Շիրակում կասեցվել է երկու դպրոցի ճաշարանների արտադրական գործունեությունը», Հայաստանի Հանրապետության Սննդամթերքի Անվտանգության Տեսչական Մարմին, 27 դեկտեմբերի 2022թ., Երևան, https://www.snund.am/hy/page/news/621/74 (դիտված՝ 12.04.2023)

տանելու հաճախականությունը, պատճառները և տեսակները, ծրագրում ծնողների ներդումային գումարի չափը, ծախսի ուղղությունը, կազմակերպման ընթացքն ու արդյունավետությունը, սննդի վերաբերյալ առաջարկություններով հանդես գալու ծնողների նախաձեռնողականությունը, հաճախականությունը, արդյունքները:

4. **Խոհանոցի և ճաշասենյակի սանիտարահիգիենիկ պայմաններ.** դիտարկել դպրոցների ճաշարանների, խոհանոցների, սեղանների սանիտարահիգիենիկ վիճակը, խոհանոցների աշխատակիցների սանիտարահիգիենիկ հագուստի առկայությունը/մաքրությունը, խոհանոցում տաք ջրի և սանիտարահիգիենիկ միջոցների առկայությունը, դիտարկել սպասքի լվացման գործընթացը:
5. **Սնունդ պատրաստելու, պահպանելու և ծրագրի բոլոր շահառուներին մատուցելու բավարար կահավորման առկայություն.** դիտարկել սնունդ պատրաստելու և պահպանելու սարքերի (էլեկտրական սալօջախ, ջրատաքացուցիչ, ջեռոց, սառնարան), բավարար քանակի սպասքի առկայությունը, մեկ սեղանի շուրջ նստող երեխաների քանակի օպտիմալությունը, ԿԱՊԿՈՒ և հատուկ սննդակարգի կարիք ունեցող երեխաների սննդի կազմակերպման ընթացքը, սննդի նմուշառումների առկայությունը, ժամկետների և համապատասխան տարաների գործածությունը:
6. **Սննդամթերքի գնումների գործընթաց.** պարզել սննդամթերքի ձեռքբերման նպատակով ձևավորված գնային առաջարկները գնահատող հանձնաժողովի անդամների գործառույթները դպրոցական սննդի կազմակերպման գործում, հանձնաժողովի ընտրության գործընթացը, ընթացիկ տարվա համար գնումների գործընթացի կազմակերպման, մատակարարող կազմակերպության/ների մրցույթի և ընտրության կազմակերպման ընթացքը, գնումների գործընթացում առկա հիմնական դժվարություններն ու սահմանափակումները, ուսումնասիրել սննդամթերքի ձեռքբերման հրավերների տեքստերը, ստացած գնառաջարկները, հանձնաժողովի կողմից կազմած արձանագրությունները:

Մեթոդներ

Ծրագիրն իրականացվել է մասնակցային մոտեցմամբ՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի կարծիքները: Կիրառվել են որակական և քանակական մեթոդներ, որոնց մասին թվային տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Մոնիտորինգի ընթացքում կիրառված մեթոդներն ու թվային տվյալները

Մեթոդ	Թվային տվյալներ
Փաստաթղթերի վերլուծություն	Թիրախային դպրոցների գնային առաջարկներ, արձանագրություններ, մատակարարների հետ կնքած պայմանագրեր/պայմանագրերի հայտարարություններ, օրենսդրական ակտեր
Խորացված հարցազրույց դպրոցների տնօրենների հետ	8

Խորացված հարցազրույցներ գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների անդամների հետ	16
Խորացված հարցազրույցներ գնումների համակարգողների հետ	4
Ֆոկուս խմբային քննարկումներ ծնողների հետ	10
Դիտարկումներ դպրոցների խոհանոցներում և ճաշարաններում	8
Հարցումներ ծնողների շրջանում	107
Խորացված հարցազրույց ԿՁՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցչի հետ	1
Ընդհանուր	
Հարցազրույցներ	29
Խմբային քննարկումներ	10
Առցանց հարցումներ	107

Մոնիտորինգի ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքը,
- հանրակրթական դպրոցներում սննդի կազմակերպման համար իրականացված գնումների գործընթացը կարգավորող փաստաթղթերը,
- դպրոցների կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերները (հրապարակման մանրամասներ, ժամկետ, հրապարակման հարթակներ),
- դպրոցների և սննդի մատակարարների միջև կնքված պայմանագրերը/պայմանագրերի կնքման մասին հայտարարությունները,
- դպրոցների և մատակարարների շահերի բախման հնարավորությունները, ստացած գնառաջարկները,
- սահմանված ճաշացանկերը:

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր և թվային տվյալներ ստանալու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Շիրակի և Տավուշի մարզպետարաններ և ընտրված դպրոցներ:

Իրականացվել է 8 խորացված հարցազրույց ընտրված դպրոցների տնօրենների (Հավելված 1), գնումների գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների 16 անդամի (Հավելված 2) և գնումների 4 համակարգողի (Հավելված 3) հետ:

Ընտրված 8 դպրոցի խոհանոցներում և ճաշարաններում երեխաների սննդի ժամին իրականացվել է դիտարկում, որի նպատակն է տեղում ծանոթանալ սննդի կազմակերպման

գործընթացին և խոհանոցի սանիտարահիգիենիկ, սննդի պատրաստման և պահպանման պայմաններին (Դիտարկման քարտը՝ Հավելված 4):

Մոնիտորինգի ընթացքում դպրոցական սննդի շահառու երեխաների ծնողների հետ իրականացվել է 10 ֆոկուս խմբային քննարկում (Հավելված 5), որոնց նպատակն է դուրս բերել սննդի հասանելիության ու որակի հետ կապված խնդիրները և լսել բարելավման վերաբերյալ ծնողների առաջարկները: Քննարկումներից երկուսն անցկացվել է առցանց եղանակով: Տավուշի մարզում իրականացվել է 4, Շիրակի մարզում՝ 6 ֆոկուս խմբային քննարկում: Ֆոկուս խմբային քննարկումներն իրականացվել են առցանց և առկա տարբերակներով: Մասնակիցների գրեթե 100%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են: Ծնողների սեռային բաշխվածության տեսակետից նույն ցուցանիշն է արձանագրվել նաև առցանց հարցումների ժամանակ, որն իրականացվել է տրված դպրոցների ծրագրի շահառու երեխաների 107 ծնողի շրջանում: Առցանց հարցումների նպատակն է հավաքագրել դպրոցում մատուցվող սննդից օգտվող երեխաների սննդային նախասիրությունների, ծնողական ներդրումային ծրագրի, հավելյալ սնունդ դպրոց տանելու/գնելու դեպքերի հաճախականության վերաբերյալ քանակական տվյալներ: Առցանց հարցման հարցաթերթը ներկայացված է Հավելված 6-ում: Առցանց հարցմանը մասնակցած ծնողներից 77-ը նշել է, որ ունի դպրոցական սննդից օգտվող մեկ, 28-ը՝ երկու, 2-ը՝ երեք երեխա:

Գծապատկեր 1. Հարցման մասնակիցներն ըստ մարզերի և համայնքների (թվային տվյալներ)



Ընտրանքի ձևավորման հիմքերը

Մոնիտորինգն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզերում: Ընտրվել է տաք սնունդ մատուցող չորս դպրոց յուրաքանչյուր մարզից: Դպրոցների ընտրության համար հիմք է հանդիսացել տարրական օղակի յուրաքանչյուր տարիքային խմբի դասարանների քանակը և դպրոցական սննդից օգտվող երեխաների թիվը: Ընտրվել է՝

- մեկական դպրոց յուրաքանչյուր մարզից, որոնք տարրական օղակի տարիքային յուրաքանչյուր խմբից ունեն երեքական դասարան,
- երկուական դպրոց յուրաքանչյուր մարզից, որոնք տարրական օղակի տարիքային յուրաքանչյուր խմբից ունեն երկուական դասարան,
- մեկական դպրոց յուրաքանչյուր մարզից, որոնք տարրական օղակի յուրաքանչյուր տարիքային խմբից ունեն մեկական դասարան:

Ընտրված դպրոցները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Մոնիտորինգի համար ընտրված դպրոցների ցանկ

Մարզ	Դպրոց	Առաջին դասարանների քանակը	Երկրորդ դասարանների քանակը	Երրորդ դասարանների քանակը	Չորրորդ դասարանների քանակը	Ծրագրից օգտվող երեխաների թիվ
Տավուշ	«Դիլիջանի N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	3	3	3	3	330
	«Իջևանի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	2	2	2	2	205
	«Հաղարծինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	2	2	2	2	175
	«Թեղուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1	1	1	1	115[7]
Շիրակ	«Գյումրու N41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	3	3	3	3	334
	«Գյումրու N29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	2	2	2	2	192[8]
	«Գյումրու N19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	2	2	2	2	220[9]
	«Մարմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1	1	1	1	106

Հետազոտության ընթացքում ծագած դժվարություններ

Հետազոտության իրականացման ընթացքում նախատեսվում էին ֆոկուս խմբային քննարկումներ ընտրված դպրոցների ծնողների հետ, ովքեր ունեն տարրական դասարաններում սովորող երեխա(ներ): Սկզբնական շրջանում մոնիտորինգային թիմը

[7] Ներառված է նաև նախակրթարանում սովորող երեխաների թիվը:
[8] Ներառված է նաև նախակրթարանում սովորող երեխաների թիվը:
[9] Ներառված է նաև նախակրթարանում սովորող երեխաների թիվը:

քննարկումներն իրականացնում էր դպրոցներում՝ խնդրելով տնօրենների քննարկմանը հրավիրել անհրաժեշտ թվով ծնողների: Այս մոտեցմամբ իրականացված քննարկումները ցույց տվեցին, որ հրավիրված ծնողները հիմնականում ուղղորդված են տնօրենների կողմից և կաշկանդված են իրենց կարծիքն արտահայտելիս: Խնդրին առերեսվելն ստիպեց մոնիտորինգային թիմին վերանայել քննարկումների անցկացման վայրի ընտրության և ծնողներին հրավիրելու մոտեցումը: Քննարկումների անցկացման համար ընտրվեցին չեզոք տարածքներ, իսկ ծնողները հրավիրվեցին անմիջապես մոնիտորինգային թիմի կողմից: Այլ տարածքում ծնողներին ֆոկուս խմբային քննարկման հրավիրելու նպատակով մոնիտորիգային թիմը դիմեց ծնողական խորհուրդների նախագահների օգնությանը: Հաճախ վերջիններս դժվարանում էին փոխանցել այլ ծնողների կոնտակտային տվյալներ՝ պատճառաբանելով ընտանեկան հանգամանքները, հաղորդակցվելու և կարծիք արտահայտելու ցանկության բացակայությունը և այլն:

Մի քանի քննարկումից առաջ ծնողները պարբերաբար ճշտում էին՝ արդյո՞ք իրենց հայտնած բացասական կարծիքները կարող են ազդել ծրագրի շարունակականության վրա՝ նշելով, որ իրենք հիմնականում գոհ են ծրագրից և չեն ցանկանում, որ այն դադարի:

Մոնիտորինգային թիմն առնչվել է մեկ այլ խնդրի գնումների գնահատող հանձնաժողովի անդամների հետ խորացված հարցազրույցների ժամանակ: Հարցազրույցներից երևում էր, որ հանձնաժողովի անդամներից շատերը տեղեկացված չեն իրենց լիազորություններից և պարզ չէր՝ որքանով են ներգրավված այդ գործընթացում: Հանձնաժողովների անդամների ոչ լիարժեք պատասխանները դժվարություն էին առաջացնում վերջիններիս գործառույթների շրջանակների մասով առավել հստակ խնդիրների բացահայտման և թիրախավորման համար:

Մոնիտորինգային թիմի համար առաջացած մեկ այլ խնդիր կապված էր տարբեր հաստատություններ ուղարկված հարցումների ժամկետների խախտման և տեղեկության ոչ լիարժեքության հետ: Տավուշի, Շիրակի մարզպետարանները, ընտրված դպրոցներից վեցը հարցմանը պատասխանել են ըստ սահմանված ժամկետների, մինչդեռ դպրոցներից երկուսի տնօրենները, պատճառաբանելով իրենց զբաղվածությունը, պարբերաբար խոստանում էին հարցմանը պատասխանել ավելի ուշ: Վերոհիշյալ դպրոցների տնօրեններից անհրաժեշտ ինֆորմացիան հնարավոր եղավ ստանալ մի քանի հեռախոսազանգերից և լիազոր մարմնի՝ մարզպետարանի, համապատասխան բաժնի պատասխանատուին դիմելուց հետո: Ժամկետների խախտման և թերի տեղեկության տրամադրման խնդիր առաջացավ նաև ԿԳՄՍ նախարարություն ուղարկված հարցման հետ: Պահանջված ամբողջական ինֆորմացիան ստանալու համար մոնիտորինգային թիմն ուղարկեց երկրորդ հարցումը՝ պահանջելով տրամադրել նախորդ հարցմամբ պահանջված ամբողջական ինֆորմացիան, ինչից հետո հնարավոր եղավ ստանալ անհրաժեշտ տեղեկությունը:

Մոնիտորինգի ընթացքում թիմի առաջ ծառացած մեկ այլ դժվարություն կապված էր դպրոցների կայքերի հետ: Դպրոցների կայքէջերի համար որոնողական համակարգերի օպտիմալացումն արված չէ, ինչի հետևանքով առաջանում է որոնողական համակարգերով կայքէջերը գտնելու խնդիր: Կայքէջերը նաև չունեն ընդհանուր մշակված կառուցվածք, ինչն էլ բարդացնում է նույնաբովանդակ տեղեկությունը տարբեր դպրոցների կայքէջերում փնտրելն ու գտնելը: Կայքէջերում տեղադրված հղումները հաճախ տանում են այլ՝ դպրոցի հետ որևէ առնչություն չունեցող էջեր: Դպրոցների կայքէջերում չի գտնվել կայուն դպրոցական սննդի կազմակերպման կամ գնումների գործընթացի վերաբերյալ որևէ ինֆորմացիա: Ընտրված դպրոցների կայքէջերը ներկայացված են Հավելված 7-ում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ դպրոցներում տրվող անվճար սննդի վերաբերյալ

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրն իրականացվում է 2010 թվականից ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի միջև կնքված համաձայնագրի հիման վրա՝ Ճյուղային սննդի ինստիտուտի տեխնիկական և Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսական աջակցությամբ: Ի սկզբանե ծրագրում ներառվել են Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերի դպրոցները: 2012 թվականին ծրագրում ընդգրկվել են նաև Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, իսկ 2013 թվականին՝ Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերը:

Քարտեզ 1. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի մեկնարկն ըստ տարեթվերի և մարզերի

2015 թվականից մեկնարկել է ծրագրի կառավարման և ֆինանսավորման փուլային անցումը ՊՀԾ-ից ՀՀ կառավարությանը: Ներկայումս ինը մարզում ծրագիրը գործում է ՀՀ կառավարության հովանու ներքո, իսկ Կոտայքի մարզի դպրոցների անցումը ազգային ծրագրին նախատեսվում է իրականացնել 2023 թվականի ընթացքում:

Քարտեզ 2. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հանձնումն ազգային ծրագրին ըստ տարեթվերի և մարզերի

Դպրոցական սնունդ տրամադրվում է ՀՀ տասը մարզի տարրական դասարաններ ունեցող 1072 դպրոցից 1029-ում: Ծրագրից օգտվում է 101708 աշակերտ: ՀՀ մարզերի դպրոցների գերակշիռ մեծամասնությունը (87.5%) տալիս է տաք սնունդ՝ միասնական երկշաբաթյա ճաշացանկով, իսկ դպրոցների 11%-ը տրամադրում է չոր սնունդ:

Գծապատկեր 2. Ծրագրի շահառուների թիվն ըստ մարզերի



Ծրագիրն ամբողջությամբ ներդրված է միայն Տավուշի և Գեղարքունիքի մարզերում (Գծապատկեր 3), իսկ հանրապետության մյուս մարզերի 43 դպրոցում սնունդ չի տրամադրվում ընդհանրապես: Ըստ ԿԳՄՍ նախարարության՝ դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով. հեռավար և դժվարհասանելի դիրք, սնվող սովորողների սակավություն կամ բացակայություն, գնումների գործընթացի հետ կապված խնդիրներ, շարքից դուրս եկած ենթակառուցվածքներ և այլն:

Գծապատկեր 3. Տարրական դասարանների և «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում ներառված դպրոցների թվաքանակն ըստ մարզերի



ՀՀ կառավարության հովանու ներքո գործող դպրոցներում սննդի կազմակերպումն իրականացվում է պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Գծապատկեր 4-ում ակնհայտ է, որ 2022 թվականի ընթացքում դպրոցական սնունդ ծրագրի համար պետական բյուջեից առավելագույն ֆինանսական միջոցներ հատկացվել են Արարատի և Շիրակի, իսկ ամենաքիչը՝ Վայոց ձորի և Արմավիրի դպրոցներին: Արարատի մարզը նաև առաջատար է ծրագրի շահառու երեխաների թվաքանակով, մինչդեռ կառավարության ֆինանսավորմամբ ծրագրից օգտվող դպրոցների թվաքանակով Արարատի մարզին զիջում են միայն Տավուշի և Վայոց ձորի մարզերը (Գծապատկեր 3):10 Գծապատկեր 2-ի և 4-ի համեմատությունը ցույց է տալիս, որ Արմավիրի մարզը ծրագրի շահառու աշակերտների թվաքանակով երկրորդն է՝ Արարատի մարզից հետո, սակայն 2022 թվականին Արմավիրում ծրագրի ֆինանսավորումը գրեթե երկու անգամ պակաս է Արարատի ծրագրին հատկացված միջոցներից: ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկից մեկնաբանել են, որ սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Արմավիրի մարզում դպրոցական սննդի ծրագրի անցումը ազգային ծրագրին տեղի է ունեցել 2022 թվականի սեպտեմբերից, իսկ մինչ այդ Արմավիրի դպրոցները ֆինանսավորվել են ՄԱԿ ՊՀԾ-ի կողմից:Նույն գծապատկերներից երևում է, որ մոնիտորինգի թիրախային մարզեր Շիրակում և Տավուշում ֆինանսական հատկացումները բաշխված են համաչափ՝ ըստ ծրագրի շահառու աշակերտների թվաքանակի:

Գծապատկեր 4. Կառավարության կողմից ծրագրի համար հատկացված ֆինանասական միջոցներն ըստ մարզերի (2022 թվական)



Երևանում ծրագրի ներդրման հնարավորությունների բացահայտման նպատակով՝ 2021 թվականից ՀՀ ԿԳՄՍ նախարարության, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» (ԿԶՆԱԿ) հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» (ԴՍԵԲ) հիմնարկի, ՄԱԿ ՊՀԾ, Սննդի ճյուղային ինստիտուտի և Երևանի քաղաքապետարանի համագործակցությամբ նախաձեռնվել է հետազոտություն, ինչի արդյունքում ակնկալվում է պարզել Երևանի հանրակրթական դպրոցների ֆիզիկական

[10] Գծապատկերները վերլուծելիս չեն դիտարկվել Կոտայքի մարզի դպրոցները, քանզի դրանք ֆինանսավորվում են ՄԱԿ ՊՀԾ-ի կողմից:

պայմանների և ենթակառուցվածքների վիճակը, գնահատել սննդի կազմակերպման կարողությունները:

«Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամը հիմնադրվել է 2016թ., որը 2020թ. վերանվանվել է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի: ԿԶՆԱԿ ի կազմում հիմնվել է ԴՍԵԲ հիմնարկը, որի գործունեությունն ուղղված է դպրոցականների որակյալ կրթության ապահովման, առողջության և սոցիալական պաշտպանվածության բարելավմանը: ԴՍԵԲ հիմնարկի լիազորությունների շրջանակը նաև ներառում է տաք սննդի երկշաբաթյա և լրացուցիչ ճաշացանկերի մշակումը[11] և ծրագրի մշտադիտարկումը: ԴՍԵԲ հիմնարկը 2021-2022թթ. ընթացքում իրականացրել է ծրագրի մշտադիտարկում Արագածոտնում, Լոռիում, Տավուշում, Վայոց ձորում, իսկ մյուս մարզերում մշտադիտարկումներ կազմակերպվել են ըստ ահազանգերի: Հիմնարկում նախատեսված կառուցվածքային փոփոխություններով ընդլայնվելու է մշտադիտարկման շրջանակը՝ ներառելով բոլոր մարզերը:

ՄԱԿ ՊՀԾ հայաստանյան ներկայացուցչության տվյալների համաձայն Հայաստանում «Դպրոցական սնունդ» ծրագիրը 0,4 տոկոսով դրական ազդեցություն է ունենում աղքատության ցուցանիշների վրա և հանդիսանում է սոցիալական պաշտպանության համակարգում հիմնական ներդրում: Հայաստանի դպրոցական սննդի ծրագրում ներդրված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարի դիմաց 7,1 ԱՄՆ դոլարի եկամուտ է ստացվում՝ դպրոցական երեխաների առողջության և կրթության բարելավման և նրանց կյանքի ընթացքում մասնագիտական արդյունավետության բարձրացման տեսքով[12]:

2. Սովորողների և ծնողների բավարարվածությունը դպրոցում մատուցվող անվճար սննդից

Ծնողների հետ անցկացրած ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում վերջիններս կարևորեցին դպրոցական սննդի ծրագիրը, մասնավորապես՝ դրա սոցիալ-կրթական բաղադրիչը: Ծնողների գոհունակությունը հիմնականում պայմանավորված է բոլոր երեխաներին տրվող միանման սննդով, ինչը բացառում կամ կանխում է սոցիալական տարանջատումը երեխաների միջև, թեթևացնում է ծնողի հոգսը և պարունակում կրթական բաղադրիչ:

> *«Գիտե՞ք ինչից ենք գոհ, որ բոլոր երեխաներն էլ նույն սննդից են օգտվում: Երեխաներ կային, որոնց հետ ծնողները սնունդ էին ուղարկում: Իսկ հիմա բոլորը հավասար են սնվում, բոլորն էլ նույն տաք ուտեստից են ուտում, բոլորը համախմբված են սնվում, ոչ թե բերում են առանձին ու սնվում են առանձին»:*
>
> **Մեջբերում ծնողների շրջանում**
> **իրականացրած ֆոկուս խմբային քննարկումից**

> *«Եթե անհատական ինչ-որ սնունդ ուղարկենք, նախ այնքան դժվար է ամեն առավոտ պատրաստել: Ես ինքս աշխատող ծնող եմ, ինձ համար նաև դժվարություն է մտածել՝ ինչ պատրաստել, որ հարմար լինի օգտվել, որովհետև պետք է սեղան կեղտոտեն, պիտի*

[11] ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի կողմից մշակված հիմնական և լրացուցիչ ճաշացանկերը ներկայացված է Հավելված 9-ում:

[12] «ՄԱԿ-Ի Պարենի համաշխարհային ծրագիրը ՀՀ կառավարությանն է փոխանցել ևս երկու մարզում «Դպրոցական սնունդ» ծրագրի կառավարումը», Միավորված ազգերի կազմակերպություն Հայաստան, 18 նոյեմբերի 2021թ., https://t.ly/RmBp (դիտված՝ 12.04.2023)

իրենց հագուստը չվնասեն և այլն.. Նմանատիպ սնունդն ավելի վերահսկված է և հաստատ ավելի ապահով, քան խանութից գնվածը:
Շատ լավ պրոցես է, որովհետև ուսուցիչը նաև ուղղորդում է՝ չի կարելի այսպես ծամել, այսպես ուտել, այսպես օգտվել, այդ իմաստով էլ նաև դաստիարակչական նշանակություն ունի ընդհանուր սնվելու գաղափարը»:

Մեջբերում ծնողների շրջանում
իրականացրած ֆոկուս խմբային քննարկումից

Ծնողների հետ իրականացրած առցանց հարցման արդյունքում պարզվել է, որ երեխաների մեծ մասն օգտվում է դպրոցում մատուցված ճաշատեսակներից: Ծնողների դիտարկմամբ երեխաները սնվում են ըստ նախասիրության և, եթե հրաժարվում են հիմնական ուտեստից, ապա օգտվում են օրվա ճաշացանկում ներառված այլ կերակրատեսակներից, մասնավորապես՝ հացից, պանրից, մրգից (խնձոր), թխվածքաբլիթից, աղցանից:

Գծապատկեր 5. Դպրոցական սննդից օգտվող երեխաների թիվն՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման



Ճաշի ժամին իրականացրած դիտարկումները հնարավորություն են տվել նաև շփվել երեխաների հետ, ստանալ կարծիքներ մատուցվող սննդի վերաբերյալ: Դիտարկումներն ու երեխաների հետ հարց ու պատասխանը ցույց են տվել, որ ճաշացանկում ներառված սննդի նկատմամբ առկա են տարբեր մոտեցումներ, իսկ ծնողների շրջանում իրականացրած հարցման միջոցով վեր են հանվել հիմնական ճաշացանկում ներառված երեխաների կողմից առավել նախընտրելի և ոչ նախընտրելի կերակրատեսակները (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Երեխաների կողմից նախընտրելի և ոչ նախընտրելի կերակրատեսակներն ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցումների

նախընտրելի	Ճաշացանկ	ոչ նախընտրելի
91	Հաց	3
72	Պանիր	16
59	Ձու	15
59	Բանջարեղենով աղցան	21
69	Մակարոն	13
39	Ոսպով և կարտոֆիլով ապուր	37
40	Բրնձով և հավի կրծքամսով ապուր	33
22	Լոբով և կարտոֆիլով ապուր	58
18	Ոլոռով և կարտոֆիլով ապուր	64
50	Բրնձով և հավի կրծքամսով փլավ	22
27	Հաճարով փլավ	49
42	Ոսպով և բրնձով փլավ	33
50	Հնդկաձավարով փլավ	19
62	Թարմ կոմպոտ	15
76	Միրգ/խնձոր	11
1	Ելակ (տրվում է դպրոցներից մեկում՝ դպրոցապատկան ելակի ջերմոցով պայմանավորված)	0
1	Բոլոր թվարկվածները	0
2	Այլ	0
0	Ոչնչից չի հրաժարվում	5
0	Դժվարանում եմ պատասխանել	2

Քննարկումների ժամանակ ծնողները նշում էին, որ երեխաները հրաժարվում են խնձորով կոմպոտից, որովհետև այն անգույն է և ոչ հրապուրիչ: Այս խնդրի լուծման համար որոշ դպրոցների խոհարարներ կոմպոտի բաղադրության մեջ ավելացնում են լրացուցիչ մրգեր և հատապտուղներ: Մեկ այլ ճաշատեսակ, որից սովորաբար երեխաները հրաժարվում են, լոբով ապուրն է, որի հիմնական բաղադրիչներն են լոբին և կարտոֆիլը: Գրեթե բոլոր դպրոցներում խոհարարները կարտոֆիլի փոխարեն ապուրի համար օգտագործում են մակարոն, իսկ կարտոֆիլն օգտագործում են աղցանի մեջ: Ըստ ծնողների՝ այս տարբերակն առավել նախընտրելի է երեխաների համար:

Դպրոցական սննդից թունավորման դեպքեր ծնողների կողմից չեն արձանագրվել: Որոշ քննարկումների ժամանակ ծնողները հաստատեցին, որ երեխաների հետ լրացուցիչ սնունդ են ուղարկում դպրոց և, եթե երեխայի մոտ թունավորման կամ թուլության նշաններ են ի հայտ գալիս, վստահ չեն կարող պնդել, որ պատճառը դպրոցական սնունդն է: Մինչդեռ արձանագրվեցին դժգոհություններ ոլոռով ապուրից, ինչն, ըստ ծնողների, դժվարամարս է և առաջացնում է փորացավ: Նույն ճաշատեսակի վերաբերյալ դիտարկում կատարեց նաև տնօրեններից մեկը:

«Դա, չեն ուտում, շատ երեխաներ սոված են մնում ոլոռով ապուրը չուտելու պատճառով, մեկի փորն է ցավում, մյուսը չի կարողանում մարսել: Կցանկանայի, որ դա հանեին ճաշացանկից կամ այնպիսի բան մատուցեին հետը, որ երեխաները սոված չմնան»:

Մեջբերում տնօրենի հետ իրականացրած խորացված հարցազրույցից

ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցիչը խորացված հարցազրույցի ժամանակ, անդրադառնալով տնօրենների և ծնողների կողմից եկող այս մտահոգություններին, նշեց, որ նմանատիպ ճաշացանկի ձևավորման հիմնական պատճառը ֆինանսական միջոցների սղությունն է: Յուրաքանչյուր սովորողի հաշվով օրական սննդի գումարը կազմում է ընդամենը 151 դրամ և այս գումարի շրջանակներում սովորողներին անհրաժեշտ էներգետիկ արժեքը հնարավոր է ապահովել ճաշացանկում ներառված ընդեղենի և բանջարեղենի միջոցով: Նույն էներգետիկ արժեքն ապահովող մսամթերքը ոչ միայն թանկ է, այլ նաև բարդ է գնումների կազմակերպման տեսակետից, քանզի առաջ է գալիս մսամթերքը սպանդանոցներից գնելու պարտադիր պայման:

Ծնողների մեծ մասի հավաստմամբ սնունդ չմատուցելու կամ պատրաստված սնունդը վատ որակի պատճառով ամբողջությամբ խոտանելու դեպքեր երբևէ չեն արձանագրվել: Ընդհանուր կաթսայում ավելացած սնունդը, տնօրենների ու խոհանոցների աշխատակիցների որոշմամբ, տրվում է անապահով ընտանիքներին, խոհանոցի աշխատակիցներին կամ դպրոցի բարձր դասարանների սովորողներին, իսկ երեխաների ափսեներում մնացած սնունդը թափվում է:

«Բաներ կան, որ, երեխաների մեծ մասը չի ուտում: Մնունդ կա, որ չեն ուտում, թափում ենք: Ավելի ճիշտ չենք թափում, տալիս ենք ուրիշ երեխաների: Մի քիչ փոփոխեն, բազմազանություն լինի, որովհետև ամեն օր նույն բաներն են»:

Մեջբերում տնօրենի հետ իրականացրած խորացված հարցազրույցից

Երեխաների թվով պայմանավորված սննդի մատուցումը դպրոցներում կազմակերպվում է մի քանի խմբով: Սովորաբար սնունդը մատուցվում է 10:35-ից սկսած և յուրաքանչյուր խմբի համար միջինում հատկացվում է 15 րոպե: Ծնողների շրջանում անցկացված ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ կարծիքներ են հնչել սնվելու համար նախատեսված ժամանակահատվածի վերաբերյալ: Մտահոգությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ երեխաների սննդի կազմակերպումը տեղի է ունենում որևէ դասաժամի ընթացքում, ինչի հետևանքով տուժում է դասապրոցեսը: Երբեմն, սահմանված ժամանակահատվածում սնվել չհասցրած երեխաները վերցնում են իրենց բաժին հացն ու պանիրը և սնվում հաջորդ դասամիջոցին:

«...ինձ դուր չի գալիս, որ երեխաները դասի հաշվի են սնվում, այ դա ընդհանրապես հաճելի չէ, կորում է դասաժամի ուղիղ կեսը, եթե ոչ ամբողջը: Նույնիսկ ուսուցիչ կա, որ իր ժամին չի էլ ուզում, որ գնան, որովհետև իրենք ունեն դասի պլան, որ պիտի հաշվի առնեն և ամեն անգամ բախվելով սրան՝ խնդիրներ են առաջանում: Դրա համար չեկոք ժամանակահատված պիտի հատկացվի, պատուհանի նման մի բան, որ երեխաներ կարողանան սնվել»:

Մեջբերում ծնողների շրջանում իրականացրած ֆոկուս խմբային քննարկումից

Քննարկումների մասնակից ծնողները կարևորում էին անվճար սննդի ծրագրի շրջանակներում ավելի բարձր դասարաններում սովորողներին ներգրավելու անհրաժեշտությունը: Հատկապես բուֆետ չունեցող դպրոցների ծնողները պատրաստակամություն էին հայտնում ծնողական ներդրումների աջակցությամբ բարձր դասարանցիներին ևս սննդով ապահովել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս ավելի երկար են մնում դպրոցում և սնվելու կարիք է առաջանում: Խորացված հարցազրույցների ժամանակ այս հարցին կարևոր շեշտադրում էին կատարում նաև տնօրենները:

> *«Շատ կուզենայի, որ սնունդը լիներ բոլորի համար, մինչև 9-րդ դասարան: Երեխա է, 7 ժամ դաս ունի, շատ են նաև սոցիալապես խիստ տարբեր պայմաններից եկած երեխաները: Կարծում եմ շատ մեծ գումար էլ չէ»:*

Մեջբերում տնօրենի հետ իրականացրած խորացված հարցազրույցից

3. Դպրոցում մատուցվող անվճար սննդի որակի և քանակի գնահատում

Դիտարկված ութ դպրոցից վեցում մատուցված ճաշատեսակը և մթերքները համապատասխանում էին սահմանված ճաշացանկին: Դպրոցներից մեկում դիտարկման օրը նախատեսված հնդկաձավարով փլավի փոխարեն մատուցվել է հաճարով փլավ, մեկ այլ դպրոցում տվյալ օրվա ճաշացանկով սահմանված կոմպոտ չի մատուցվել: Դիտարկումների ընթացքում մատուցված սննդի ու սահմանված ճաշացանկի միջև այլ անհամապատասխանություններ չեն նկատվել: Տեղում սննդի դիտարկումը ցույց է տվել, որ բոլոր դպրոցներում հիմնականում օգտագործվել են թույլատրելի սննդամթերքներ:

Սննդի որակը գնահատվել է մոնիտորինգային խմբի կողմից ըստ հոտի, տեսքի և տաք/սառը ցուցիչների: Հիմնական ուտեստը բավարար ջերմաստիճանի էր, թարմ պատրաստված: Որոշ դպրոցներում սնունդն ուներ ախորժելի տեսք և հոտ: Խումբը դիտարկել է նաև երեխաներին մատուցվող հացի թարմությունը: Դիտարկվող դպրոցներից միայն մեկն է հացը թխում տեղում, մյուս դպրոցներին հացը մատակարարվում է ամեն օր՝ վաղ առավոտյան: Այցերից մեկի ժամանակ տնօրենը պատմեց թարմ ստացած հացը հին հացով փոխարինելու դեպքի մասին: Նկատելով, որ սովորողներին տրվել է հին հաց, տնօրենը կապ է հաստատել մատակարարող կազմակերպության հետ: Վերջինիս ներկայացուցիչը պնդել է, որ մատակարարվել է թարմ հաց և ներկայացրել տեղի ունեցածի իր վարկածը՝ նշելով, որ բազմիցս առնչվել է նման խնդրի: Ըստ մատակարարի՝ վաղ առավոտյան մատակարարվող հացը ընդունում է դպրոցի պահակը կամ տնտեսվարը, ով, մինչ դպրոցում կրթական գործընթացի մեկնարկը, թարմ հացը խանութում փոխանակում է հին հացով՝ դրա դիմաց ստանալով նաև գումարային փոխհատուցում: Տնօրենի հավաստմամբ՝ այս դեպքի բացահայտումից և դպրոցի աշխատակցին հեռացնելուց հետո, նման դեպքեր այլևս չեն արձանագրվել:

Տնօրենը նաև ներկայացրեց դպրոցում հավի մսի սահմանված չափաքանակից պակաս մատուցելու և այդ հիմքով աշխատակիցներին աշխատանքից հեռացնելու դեպքի մասին:

Դիտարկումները ցույց են տվել, որ բոլոր դպրոցներում սնունդը պատրաստվում է ծրագրի շահառու երեխաների թվով՝ անկախ բացակաների թվից և, ըստ խոհանոցների աշխատակիցների, բավարարում է բոլոր շահառուներին:

Գծապատկեր 6. Դպրոցական սննդով երեխաների կշտանալու վերաբերյալ արդյունքներն՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)

Ծնողների շրջանում անցկացրած առցանց հարցումների արդյունքների համաձայն երեխաների 50,4%-ը կշտանում է դպրոցական սննդով:

Հարցմանը մասնակցած ծնողների 36,4%-ը նշել է, որ երեխան դպրոցական սննդով կշտանում է երբեմն, իսկ 7,4%-ը նշել է «Ոչ, երբեք չի կշտանում» տարբերակը:



Մեր դիտարկումներից մեկի ժամանակ ծնողական ներդրումային գումարով ձեռք բերված թխվածքաբլիթը շատ արագ ավարտվեց, մինչդեռ երեխաներից շատերը պահանջում էին երկրորդ կտոր թխվածքաբլիթ: Մեր դիտարկումները ցույց տվեցին նաև, որ, երբեմն, երեխաները պահանջում են երկրորդ չափաբաժին հիմնական ճաշատեսակից: Ծնողների հետ անցկացրած առցանց հարցումների համաձայն երեխաները երկրորդ չափաբաժին պահանջում են, քանի որ համեղ է կամ տվյալ օրը մատուցվել է իրենց սիրելի ճաշատեսակը: Երկրորդ չափաբաժին պահանջելու պատճառներից է նաև մեկ չափաբաժնով չկշտանալը:

Ճաշարաններում իրականացված դիտարկումները ցույց են տվել, որ կան նաև հիմնական ճաշատեսակից հրաժարվող երեխաներ: Մոնիտորինգային խումբը վերջիններից փորձել է տեղեկանալ՝ ինչո՞ւ չեն օգտվում տաք սննդից: Որպես հիմնական պատճառ երեխաները նշում են տվյալ ճաշատեսակը չհավանելը կամ ոչ համեղ լինելը:

Գծապատկեր 7. Երկրորդ չափաբաժին պահանջելու վերաբերյալ թվային տվյալներ՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)



Դիտարկման ընթացքում ճաշարաններում նկատվել են այլ՝ ոչ դպրոցում մատուցված սննդից օգտվելու դեպքեր, չնայած մի քանի դպրոցների խոհանոցների աշխատակիցների հետ զրույցները ցույց են տվել, որ վերջիններս արգելում են երեխաներին այլ սնունդ տանել ճաշարան՝ խրախուսելով դպրոցական սննդով սնվելը: Որոշ դպրոցների ծնողներ նշում էին, որ արգելված է խանութից գնված սնունդ դպրոց տանելը, մինչդեռ նման արգելք չի գործում տանը պատրաստված սննդի պարագայում: Առցանց հարցմանը մասնակցած 107 ծնողից 31-ը (29%) նշել է, որ մշտապես ուղարկում է լրացուցիչ սնունդ երեխայի հետ (Գծապատկեր 8): Գծապատկեր 8-ից նաև ակնհայտ է, որ երեխայի հետ մշտապես սնունդ ուղարկող 31 ծնողից 23-ը ներկայացնում է Տավուշի մարզը: Ցուցանիշը գրեթե հավասարաչափ է բաժանվում գյուղական և քաղաքային դպրոցներ ներկայացնող ծնողների միջև: Հարկ է նշել, որ «Այո, միշտ ուղարկում եմ» պատասխանը տված Տավուշի 14 ծնող ներկայացնում է միևնույն գյուղական դպրոցը:

Գծապատկեր 8. Երեխայի հետ դպրոց հավելյալ սնունդ ուղարկելու վերաբերյալ թվային տվյալներ՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)



Գծապատկեր 9-ից երևում է, որ հարցմանը մասնակցած 27 ծնողի (25%) երեխաները միշտ օգտվում են բուֆետից կամ դպրոցի հարևանությամբ գործող կրպակից և նրանք բոլորը ներկայացնում են Տավուշի մարզը: Տավուշցի ծնողների մեծ մասը «Արդյո՞ք ձեր երեխան սնունդ գնելու համար օգտվում է դպրոցի բուֆետից կամ դպրոցի հարևանությամբ գործող կրպակից» հարցին տվել է «Այո, միշտ» պատասխանը, մյուս մասը նշել է «Երբեմն» տարբերակը: «Որտեղի՞ց է սովորաբար Ձեր երեխան գնում սնունդը» հարցին ի պատասխան ծնողները հիմնականում նշել են «Դպրոցի հարևանությամբ գործող կրպակից» տարբերակը:

Առավել հաճախ ծնողները երեխայի հետ դպրոց են ուղարկում հաց ու պանիր, քաղցր բլիթներ, պիցցա, կարկանդակ, խաչապուրի, կոնֆետներ: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ ծնողների կողմից երեխայի հետ հավելյալ սնունդ կամ սննդի ձեռքբերման համար գումար ուղարկելու կամ չուղարկելու հակվածությունը տարբեր է՝ ըստ դպրոցների և դասարանների: Որոշ դպրոցներում ծնողները պարտադիր երեխայի հետ ուղարկում են գումար՝ բուֆետից կամ դպրոցին կից գործող խանութից լրացուցիչ սնունդ ձեռք բերելու համար: Տպավորությունն այնպիսի է, որ այս դպրոցներում ծնողները հետևում են մեկը մյուսի օրինակին՝ հավելյալ սնունդ դպրոց ուղարկելու սովորությանը տալով զանգվածային բնույթ: Որոշ դպրոցներում այս խնդիրն ավելի քիչ է արտահայտված և ծնողների մեծ մասը հակված չէ երեխայի հետ որևէ սնունդ կամ գումար ուղարկել: Այսպիսի ծնողներն ավելի մեծ թիվ են կազմում: Վերջիններս նշել են, որ դպրոցում մատուցված սնունդը բավարարում է երեխաներին:

Գծապատկեր 9. Դպրոցից դուրս սնունդ գնելու վերաբերյալ թվային տվյալներ՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)



Ծնողների շրջանում իրականացրած հարցումները ցույց են տվել, որ ծնողներից 27-ը երեխայի համար հավելյալ սնունդ գնելու համար ամսական ծախսում է 1500-3000 կամ օրական՝ 150-200 դրամ (Գծապատկեր 10): Գծապատկերից երևում է, որ կան ծնողներ, ովքեր ամսական կտրվածքով երեխայի հավելյալ սննդի վրա ծախսում են 5000 և ավել դրամ: Առավել հաճախ սնունդ գնելու համար ծնողը/երեխան օգտվում է դպրոցի հարևանությամբ գործող կրպակից, քանզի դպրոցների մեծ մասում բուֆետ չի գործում:

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում և առցանց հարցմանը պատասխանելիս երեխաների հետ լրացուցիչ սնունդ ուղարկելու հիմնական պատճառ ծնողները նշել են դպրոցական սննդից հրաժարվելը, չհավանելը, չկշտանալը, դասերից հետո որևէ խմբակի հաճախելը: Ծնողները նաև նշել են, որ սովորաբար երեխաներն առավոտյան չեն նախաճաշում և հավելյալ սնունդն ուղարկում են, որպեսզի մինչև դպրոցական սննդի կազմակերպման ժամը երեխաները սոված չմնան: Մեր դիտարկումների ժամանակ նկատեցինք, որ երեխաները սովածության պատճառով իրենց հետ բերած սննդով սնվում են մինչև սահմանված ճաշի ժամը, իսկ ճաշի ժամին այլևս ցանկություն չեն ունենում սնվել դպրոցական սննդով: Սա ենթադրում է, որ կա անհրաժեշտություն վերանայել սննդի կազմակերպման ժամերը:

Գծապատկեր 10. Ամսական հավելյալ սննդի համար ծախսվող գումարի և սնունդը գնելու համար առավել նախընտրած վայրերի վերաբերյալ թվային տվյալներ



Հիմնական ճաշատեսակը բոլոր դպրոցներում բաժանվում է համաչափ՝ յուրաքանչյուր սովորողի համար առանձին ափսեով: Մինչդեռ աղցանները, որոշ դպրոցներում, մատուցվում են ընդհանուր մատուցարաններով: Ճաշի ժամին իրականացրած դիտարկումները ցույց տվեցին, որ աղցանը ընդհանուր մատուցարանից անձնական օգտագործման ափսեի մեջ լցնելը դժվարություն է առաջացնում երեխաների համար և, շատ հաճախ, վերջիններս չեն օգտվում աղցանից այնքան ժամանակ, քանի դեռ ուղեկցող ուսուցիչը չի առաջարկում և աղցանը լցնում երեխայի ափսեի մեջ: Ծնողների հավաստմամբ՝ մատուցման նման ձևը, երբեմն, պատճառ է դառնում աղցանի անհամաչափ բաշխման: Նույն մտահոգությունը հայտնեց նաև ԿՁՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցիչը:

> *«Սննդաբանական նորմերով ճիշտ չէ ուտելիքն ընդհանուր ափսեով դնելը, 4-րդ դասարանի երեխան ի վիճակի չէ իրեն հասանելիք չափաբաժինը վերցնել: Սննդաբանը բալանսավորված սնունդ է գրում. 150 գրամ սրանից, 200 գրամ սրանից, 100 գրամ սրանից, սրա մեջ այսքան սպիտակուց կա, սրա մեջ այսքան ճարպ, սրա մեջ այսքան ածխաջուր: Եթե դու որոշել ես ուտելիքն ընդհանուր ափսեով դնել, իսկ առաջին դասարանի երեխան որոշի այսքան հաց ուտի, թե՝ այսքան, խախտվում է բալանսավորումը»:*

Մեջբերում ԿՁՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցչի հետ իրականացրած խորացված հարցազրույցից

Ծնողները նաև կարևորեցին հիմնական կերակրատեսակն ու աղցանը տարբեր ափսեներով մատուցելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ հաճախ երեխան չի օգտվում իր նախընտրելի կերակրատեսակից, եթե այն մատուցված է ոչ նախընտրելի կերակրատեսակի հետ՝ միևնույն ափսեով: Ըստ ծնողների՝ երեխան կարող է հրաժարվել սննդից, եթե նույնիսկ երկու կերակրատեսակն էլ նախընտրելի են, բայց մատուցված են նույն ափսեով:

Քննարկումների ընթացքում ծնողներն առաջարկեցին կատարել մասնակի փոփոխություններ ճաշացանկում, օրինակ՝ պանիր մատուցել ամեն օր, որպեսզի հիմնական ճաշատեսակից չօգտվող երեխաներն օգտվեն հաց ու պանրից: Ծնողներն առավելապես նախապատվություն են տալիս կաթնամթերքին (մածուն, թթվասեր, կաթնաշոռ, կաթնային ապուրներ), թխուկներին, մրգին: Ծնողներն առաջարկեցին ավելացնել նաև մրգի տեսականին, քանզի ըստ սահմանված հիմնական ճաշացանկի երեխաներին մատուցվում է միայն խնձոր, իսկ մրգերի մնացած տեսակներից դպրոցների մեծ մասում օգտագործվում է քիչ քանակությամբ՝ կոմպոտի պատրաստման համար: Հարկ է նշել, որ ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի սննդաբանների թիմի կողմից սահմանված լրացուցիչ ճաշացանկով թույլատրվում է սեզոնային այլ մրգերի մատուցումը:

Քննարկումները ցույց են տվել, որ թույլատրվող և չթույլատրվող մթերքների մասին ծնողների մեծ մասն անտեղյակ է՝ նշելով, որ սա առավելապես դպրոցի պատասխանատվությունն է և «ծրագիրը իրականացնողն է կրում այդ պատասխանատվությունը»: Չնայած բոլոր դիտարկվող դպրոցների ճաշարաններում փակցված են երկշաբաթյա ճաշացանկեր, ծնողները մատուցվող սննդատեսակներից մեծամասամբ տեղեկանում են իրենց երեխաներից:

4. Ծնողական ներդրումային գումար

Թիրախային բոլոր դպրոցներում ծնողները կատարում են սեփական ներդրումը «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում: Ըստ ոլորտի պատասխանատուների՝ ծնողական ներդրումը ծրագրի առանցքային մասն է:

> *«Բնականաբար էս ծրագիրն առանց ծնողների մասնակցության անհնարին է, որովհետև հենց բաղադրիչներից մեկն այն է, որ համայնքը, ծնողը մասնակցի»:*
>
> **Մեջբերում տնօրենի հետ իրականացրած խորացված հարցազրույցից**

> *«Ամբողջ աշխարհի 89 երկրներում 80-90% ներդրում անում է համայնքը/ծնողը, 10%-ը՝ պետությունը: Մեր մոտ 100 %-ն անում է պետությունը: Բայց այս ծրագիրն ունի ծնողի հոգածության կարիք»:*
>
> **Մեջբերում ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցչի հետ հարցազրույցից**

Ներդրումային գումարների սահմանաչափի և հավաքագրման մեխանիզմներ սահմանված չեն: Գումարի չափը որոշվում է ծնողների, տնօրենների ու դասղեկների կողմից և հավաքվում է յուրաքանչյուր ամսվա կամ կիսամյակի համար: Ըստ տնօրենների և ծնողների սոցիալապես անապահով, տարրական դասարաններում սովորող երկու և ավել երեխա

ունեցող ծնողները չեն կատարում ներդրում: Սահմանված գումարի չափը կրճատվում է, եթե տվյալ ամսում երեխաները գտնվել են դպրոցական արձակուրդում:

Գծապատկեր 11. Յուրաքանչյուր ամիս դպրոցական սնունդ ծրագրի համար կատարված ներդրումներն՝ ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)



Ներդրումային գումարի տնօրինման և ծախսերի կազմակերպման համար միասնական մոտեցում ևս առկա չէ: Հիմնականում գումարը հավաքագրվում է ծնողների, ծնողական խորհուրդների նախագահների կամ դասղեկների կողմից: Հարցումները ցույց են տվել, որ ներդրումային գումարներն առավել հաճախ պահվում են ծնողական խորհուրդների նախագահների կողմից: Սակայն մեծ թիվ են կազմում նաև այն ծնողները, ովքեր դժվարացել են պատասխանել ներդրումային գումարի պահպանմանն առնչվող հարցերին:

Գծապատկեր 12. Ծնողական ներդրումային գումարների պահպանումն ըստ ծնողների շրջանում իրականացված հարցման (թվային տվյալներ)



Ներդրումային գումարներով գնումներն, ըստ հարցումների, հիմնականում կատարում են ծնողները, տնօրենները կամ խոհանոցի աշխատակիցները, սակայն հացվող 107 ծնողից 56-ը դժվարացել է պատասխանել՝ ով կամ ովքեր են իրականացնում գնումներ: Ֆոկուս խմբային

քննարկումները ևս ցույց տվեցին, որ գումարների տնօրինումից առավելապես տեղեկացված են ծնողական խորհուրդների նախագահները, իսկ մյուս ծնողների իրազեկվածությունը և ներգրավվածությունը գնումների գործընթացում բավականին ցածր է: Կատարված գնումների դիմաց տրված կտրոնները պահվում են տնօրենների մոտ:

> *«Այո, ես եմ հավաքում: Ծնողկոմիտեն է հավաքում, ճաշարանում դնում ենք, բայց գնումներ կատարելուց հարցնում են, օրինակ՝ այսքան գումար ավելացել է, կցանկանա՞ք բանջարեղեն, լոլիկ վերցնենք, երեխաներին վարունգ և լոլիկ տանք: Իսկ միրգ կարո՞ղ ենք վերցնել»:*

Մեջբերումներ ծնողների շրջանում իրականացրած ֆոկուս խմբային քննարկումից

Գծապատկեր 13. Ծնողական ներդրումային գումարների տնօրինումն ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)



Ըստ հարցումների և ֆոկուս խմբային քննարկումների՝ ներդրումային գումարները հիմնականում ծախսվում են հիգիենայի պարագաների և լրացուցիչ սննդի ձեռքբերման համար: ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցիչն հարցազրույցի ժամանակ անդրադարձավ ծնողական ներդրումային գումարներով տնտեսական և հիգիենայի պարագաների ձեռքբերմանը՝ նշելով, որ նմանատիպ ապրանքների համար դպրոցն ստանում է ֆինանսավորում, ինչն արտացոլվում է բյուջեում և չի տարանջատվում խոհանոցի և ճաշարանի համար անհրաժեշտ տնտեսական ապրանքներից: Ֆոկուս խմբային քննարկումներից մեկի ժամանակ ծնողները թվարկեցին նաև ծնողական ներդրումներով ձեռք բերվող այնպիսի սննդամթերքներ, որոնք ներառված են հիմնական ճաշացանկում և դրանց գնումները նախատեսվում է կատարել դպրոցի կողմից՝ ծրագրի համար պետության հատկացրած միջոցներով:

Թիրախային երեք դպրոցում ծնողական ներդրումային գումարներից հատկացումներ են կատարվում նաև խոհանոցի աշխատակիցներին՝ ի հավելումն հիմնական աշխատավարձի: Համաձայն օրենքի՝[13] 86-ից 247 սովորող ունեցող դպրոցներին հատկացվում է խոհանոցի մեկ աշխատակից, որի վարձատրության չափը հավասար է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձին:[14] Հաշվի առնելով աշխատանքի ծավալը՝ տնօրենները հրավիրում են 2-3 խոհանոցի աշխատակից, իսկ, երբեմն, նաև՝ 4 աշխատակից: Արդյունքում յուրաքանչյուր աշխատակից ամսական ստանում է ոչ ավել քան 30 000 դրամ աշխատավարձ: Տնօրենների հավաստմամբ՝ խոհանոցի աշխատակիցները աշխատանքի են գալիս առավոտյան ութից, երբեմն նույնիսկ ավելի վաղ, և մնում են աշխատավայրում մինչև 15:00-ն կամ ավելին: Նրանց աշխատանքային պարտականությունների շրջանակը ներառում է սննդի պատրաստումը, խոհանոցի և ճաշարանի մաքրությունը: Տնօրենների հավաստմամբ աշխատավարձի և աշխատանքի ծավալի անհամաչափության պատճառով շատ հաճախ դժվարանում են գտնել աշխատակիցներ: Ծնողական ներդրումային գումարներից խոհանոցի աշխատակիցներին տրվող հավելյալ վճարումները կատարվում են առձեռն՝ որպես փաստաթղթային հիմնավորում ներկայացնելով ստացականներ:

«Պատկերացրեք իրենք (խոհանոցի աշխատակիցները) կարող է մեկին կամ մեկ անց կես վերջացրած լինեն, բայց գնան ժամը հինգին: Սա ենթադրում է սպասք լվանալ, մաքրել, դասավորել, հաջորդ օրվան նախապատրաստվել, այս աշխատանքներն են: Հավելյալ վճարը ոչ ամեն ամիս է տրվում, եթե ունեցել ենք ավել գումար՝ տվել ենք»:

Մեջբերում տնօրենի հետ
իրականացրած խորացված հարցազրույցից

«Այդ աշխատավարձով խոհարար գտնելը հնարավոր չէ: Այդ աշխատավարձով ոչ մեկ չի գա աշխատի: Լավ կլինի խոհարարին վարձատրեն նորմալ, մի քիչ արժանապատիվ աշխատավարձ ստանա»:

Մեջբերում տնօրենի հետ
իրականացրած խորացված հարցազրույցից

«Գիտեք ոնց, ծնողկոմիտեներով 800 դրամ ընդհանուր ասվել է, յուրաքանչյուր երեխայից 500 դրամը խոհարարին ենք վճարում, թեպետ դա շատ քիչ է իրենց աշխատանքի համար, էն 300 դրամն էլ օրվա չափաբաժնով բաժանում են»:

Մեջբերումներ ծնողների շրջանում անցկացված
ֆոկուս խմբային քննարկումից

[13] Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 04-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Հանրակրթություն» ծրագրի «Տարրական ընդհանուր հանրակրթություն» և «Նախադպրոցական կրթություն» միջոցառումների շրջանակում սովորողներին սննդի կազմակերպման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվարկման նորմատիվները հաստատելու կարգի մասին, 26 հունվարի 2022 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159794 (դիտված՝ 12.04.2023)

[14] 2022 թվականի դեկտեմբերի 7-ին «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի համաձայն ՀՀ-ում նվազագույն աշխատավարձ է սահմանվել 75 000 ՀՀ դրամը՝ նախկին 68 000 ՀՀ դրամի փոխարեն:

Գծապատկեր 14. Ծնողական ներդրումային գումարների ծախսային ուղղություններն ըստ ծնողների շրջանում իրականացրած հարցման (թվային տվյալներ)



Հարցումները ցույց տվեցին, որ բավականին մեծ թիվ են կազմում այն ծնողները, ովքեր տեղյակ չեն ներդրումային գումարների ծախսային նպատակներից: Քննարկումներից էլ պարզ դարձավ, որ մի խումբ ծնողներ ոչ միայն չեն ներգրավվում ներդրումային գումարներով գնումներ կատարելու գործընթացին, այլև գտնում են, որ չունեն այդ իրավունքը: Շատ ծնողների մոտ էլ առկա է այն կարծիքը, որ ողջ ծրագիրն իրականացվում է ծնողական ներդրումային գումարների հաշվին, մինչդեռ ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեն է (բացառությամբ Կոտայքի մարզի դպրոցների, որտեղ ֆինանսավորումն ապահովում է ՄԱԿ ՊՀԾ-ն):

Ներդրումային գումարների առնչությամբ ընդհանուր մոտեցումների և ծնողների շրջանում իրազեկվածության բացակայությունն առաջացնում է այդ գումարների հավաքագրման և տնօրինման թափանցիկության ու հաշվետվողականության խնդիր: ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցիչը նշեց, որ խնդրահարույց իրավիճակներից խուսափելու և գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով մշակվում է ծնողական ներդրումների ուղեցույց: Այն նախատեսում է ներդրումային գումարների մուտքագրում դպրոցի հաշվեհամար և տնօրինում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի: Կազմվելու են նաև ծնողների կողմից բնամթերքի նվիրատվության ընթացակարգեր, որոնցով սահմանվելու են թույլատրվող բնամթերքների նվիրատվության կարգը և փաստաթղթավորումը: Նման ընթացակարգերի սահմանումը հատկապես արդյունավետ կարող է գործել գյուղական բնակավայրերում, որտեղ ընդունված է բնակիչների կողմից գյուղմթերքի տեսքով նվիրատվությունները դպրոցին, և դպրոցական սնունդ ծրագրի մասին պատշաճ իրազեկման պարագայում, բնակիչներն առավել պատրաստակամ կլինեն գյուղմթերքի տեսքով կատարել նվիրատվություններ: Նվիրատվության արդյունավետությունն ու թափանցիկությունն ապահովելու համար հարկավոր կլինի բնակիչների շրջանում նախ բարձրացնել իրազեկվածության մակարդակը, իսկ գործընթացն իրականացնել փաստաթղթային հիմքով: Սա մի կողմից հնարավորություն կտա դպրոցին կրճատել ծախսերը, մյուս կողմից՝ կբարձրացնի համայնքի ներգրավվածությունը դպրոցական սնունդ ծրագրում:

5. Դպրոցների խոհանոցների և ճաշասենյակների սանիտարահիգիենիկ պայմանների գնահատում

Ընտրված ութ դպրոցների խոհանոցներում և ճաշարաններում իրականացված դիտարկումների ընթացքում ուշադրություն է հատկացվել սանիտարահիգիենիկ պայմաններին, որոնք գնահատվել են բավարար: Դիտարկվող դպրոցների խոհանոցների աշխատակիցների մեծ մասը կրում էին գլխանոցներ, գոգնոցներ և ձեռնոցներ, մինչդեռ հողաթափեր կրում էին ոչ բոլորը: Երեք դպրոցների ճաշարաններում և խոհանոցներում դիտարկման ամբողջ ընթացքում աշխատակիցները կրում էին ձմեռային կոշիկներ: Դիտարկվող դպրոցներից միայն մեկում խոհանոցի աշխատակիցների արտահագուստն ակնհայտ կեղտաբծեր ուներ: Դիտարկման ընթացքում դիտարկողներն ականատես են եղել, որ խոհանոց կամ ճաշարան մտնողները (տնօրեն, երեխաներին ճաշարան ուղեկցող ուսուցիչներ) չեն պահպանում սանիտարահիգիենիկ կանոնները, ինչը դրսևորվում էր սանիտարական հագուստ չկրելով: Դպրոցներից մեկում՝ մոնիտորինգային թիմի ճաշարանում գտնվելու պահին, խոհանոցում սկսվեցին շինարարական աշխատանքներ, մինչդեռ սպասքը դրված էր բաց դարակաշարի վրա և ծածկած չէր որևէ պաշտպանիչ միջոցով:

Խոհանոցների և ճաշարանների սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման նպատակով հիմնականում կիրառվում են ախտահանիչ նյութեր (քլորամին Ճ, սոդա, քացախաթթվի 1%-ոց լուծույթ), լաթեր, սպունգեր: Ըստ խոհանոցի աշխատակիցների՝ տարածքը մաքրվում է ամեն օր, իսկ գլխավոր մաքրման աշխատանքներն իրականացվում են շաբաթը մեկ անգամ: Դիտարկվող բոլոր դպրոցներում սպասքի լվացման համար առկա է հոսող տաք ջուր: Տեղում հարցումները ցույց են տվել, որ դպրոցների մեծամասնությունը ամանների և բաժակների լվացման համար օգտագործում է երկտեղանի լվացատաշտեր, մինչդեռ դպրոցներին տրված սննդի անվտանգության ու հիգիենայի կանոնների համաձայն ամանները հարկավոր է լվանալ երեք, իսկ բաժակները՝ երկու տեղանոց լվացատաշտերում:

Դիտարկվող դպրոցների մեծ մասում սովորողները սնվելուց առաջ չեն լվացվում: Միայն մեկ դպրոցում արձանագրվեց, որ ճաշարան մտնելիս սովորողները լվացվեցին, սակայն չչորացրեցին ձեռքերը, իսկ չորացնող սարքը անջատված էր վարդակից: Սնվելուց առաջ լվացվելու հարցը քննարկվել է նաև ծնողների հետ ֆոկուս խմբային քննարկումների և տնօրենների հետ իրականացված խորացված հարցազրույցների ժամանակ: Ծնողների մեծ մասի հավաստմամբ՝ դասարանում երեխաները խոնավ անձեռոցիկներով կամ ալկոգելով մաքրում են ձեռքերը, որից հետո գնում են ճաշարան:

> *«...ինչ են ասում դասվարները, հիմա կիջնեք ու կտեսնեք՝ քանի երեխա է նստած: Այդքան երեխային ինչքան ժամանակ շուտ պետք է բերել, որ լվացվեն, իրար չխանգարեն, հետո գան նստեն: Դրա համար իրենք մշակույթ են ձևավորել: Դասարանում երեխաները թաց անձեռոցիկներով, ալկոգելով լվացվում են, մաքրվում, գալիս, նստում, ուտում են: Ուտելուց հետո, եթե ինչ-որ մեկը, երեխա է, մի քիչ անուշադիր է կերել կամ անձեռոցիկը իրեն չի բավարարել, կարող է գնալ և լվացվել»:*

Մեջբերում տնօրենի հետ իրականացրած

խորացված հարցազրույցից

«Ես որպես ծնող եմ ասում՝ իմ աղջիկը միշտ բողոքում է, որ սանհանգույցի ջուրը տաք չէ, այս եղանակին արդեն չի լվացվում, ասում է, որ շատ սառն է: Ես թաց անձեռոցիկ եմ օգտագործում»:

Մեջբերում ծնողների շրջանում իրականացրած ֆոկուս խմբային քննարկումից

Դիտարկված դպրոցների շարքում կան դպրոցներ, որոնց ճաշարաններում դիտարկման պահին բավարար ջերմաստիճանն ապահովված չէր, և երեխաները ստիպված էին ճաշարանում նստել վերարկուներով: Ծնողների դիտարկմամբ շատ կարևոր է նաև ճաշարանների ներքին հարդարումը, որը պետք է տարբերվի դասարանային ձևավորումից: Այս տեսակետից մի քանի ճաշարանի պատեր աչքի էին ընկնում հետաքրքիր, թեմատիկ նկարազարդումներով: Դիտարկումները ցույց տվեցին նաև, որ ճաշարաններում լուսավորությունը բավարար չէ, իսկ սեղաններն ու աթոռները հին են: Սանիտարահիգիենիկ պայմանների ապահովմանը անդրադառնալով՝ տնօրեններից շատերը նշել են, որ հաճախ սահմանված նորմերն ամբողջությամբ պահպանելը դառնում է անհնար, քանզի դպրոցների շենքերը հին են և, ի սկզբանե, շենքային հնարավորությունները, խոհանոցների և ճաշարանների տարածքները սահմանված նոր չափանիշներին չեն համապատասխանում:

Քննարկումները ցույց տվեցին, որ ծնողների մեծ մասը հակված չէ սեփական նախաձեռնությամբ ծանոթանալ դպրոցների խոհանոցների և ճաշարանների սանիտարահիգիենիկ պայմաններին, մատուցվող սննդի որակին: Ըստ ծնողների՝ այս և նմանատիպ հարցերով հիմնականում զբաղվում են ծնողական խորհուրդների նախագահները, ովքեր համագործակցում և սննդի կազմակերպման շուրջ քննարկումներ են ունենում հիմնականում տնօրենների հետ: Ծրագրի շահառու մյուս երեխաների ծնողների ներգրավվածությունը գործընթացում սահմանափակվում է ներդրումային գումարների վճարմամբ:

6. Դպրոցներում սննդի պատրաստման, պահպանման և սովորողներին մատուցելու պայմանների գնահատում

Դիտարկվող բոլոր դպրոցներն ունեն անհրաժեշտ առաջնային նշանակության տեխնիկական սարքավորումներ՝ էլեկտրական սալօջախ, ջրատաքացուցիչ, ջեռոց, սառնարան: Որոշ դպրոցներ ունեն նաև հացթխման սարքեր, որոնք, սակայն, չեն կիրառվում և դպրոցները հացը գնում են արտաքին կազմակերպությունից: Դպրոցներից մեկում առկա է տաք կերակուրների պատրաստման համար անհրաժեշտ կաթսաների խնդիր, ինչի լուծման նպատակով խոհանոցի աշխատակիցները տրամադրել են իրենց սեփական կաթսաները:

Դպրոցներում սննդի կազմակերպումն իրականացվում է խմբային մոտեցմամբ, ինչի շնորհիվ ճաշարանի աթոռների քանակը հիմնականում բավարարում է տվյալ պահին սնվող երեխաների թվաքանակին: Դիտարկվող երեք դպրոցում նույնիսկ այս մոտեցման դեպքում նկատվում է աթոռների պակաս և երեխաները ճաշարանում նստում են շատ խիտ, ինչը սնվելու ընթացքում, ակնհայտորեն, առաջացնում է անհարմարություններ երեխաների համար:

Ըստ տնօրենների և ծնողների՝ սպասքը պարբերաբար թարմացվում է ծնողական ներդրումների շնորհիվ: Դիտարկումները ցույց տվեցին, որ խոհանոցներում կա ինչպես նոր, այնպես էլ հին և թեթև վնասվածքներով սպասք: Սպասքի քանակը գրեթե բոլոր

դպրոցներում բավարարում է երեխաների քանակին: Միայն մեկ դպրոցում խոհանոցի աշխատակիցները նշեցին, որ առաջին խմբի սննդի կազմակերպումից անմիջապես հետո արագ լվանում են սպասքը, որպեսզի կարողանան կազմակերպել նաև երկրորդ խմբով ճաշարան եկող երեխաների սնունդը: Դիտարկված դպրոցներից մեկում երեխաների սննդի մատուցումն իրականացվում է պլաստիկե սպասքով:

Դիտարկված ութ դպրոցներից յոթը տարրական դասարաններում ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: Դպրոց հաճախող ԿԱՊԿՈՒ երեխաների շարքում, ըստ տնօրենների, հենաշարժողական խնդիրներ ու ճաշարան գնալու դժվարություն ունեցող երեխաներ չկան, և վերջիններս սնվում են մյուս երեխաների հետ միասին: Դպրոցներից միայն մեկում տնօրենը նշեց, որ ունեն մեկ ԿԱՊԿՈՒ երեխա, ով չի գնում ճաշարան և չի օգտվում սննդից: Երեխան սովորաբար, դպրոցում անցկացնում է 2-3 ժամ, իսկ սնունդը հոգում է ծնողը: Մեկ այլ դպրոցում կա գրանցված 101 ԿԱՊԿՈՒ երեխա, որոնցից 51-ը դպրոց չի հաճախում և ստանում է տնային ուսուցում: Տնօրենի հավաստմամբ՝ տաք սննդի կազմակերպումը հնարավորություն չի տալիս ապահովել տնային պայմաններում ուսուցում ստացող երեխաների սնունդը և, այդ իսկ պատճառով, սննդի կազմակերպման համար մրցույթ հայտարարելիս տնօրենը չի ընդգրկում նման երեխաների քանակը սննդի ձեռքբերման և կազմակերպման նպատակով: ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցիչն իր հարցազրույցի ընթացքում նշեց, որ մշակվում է ուղեցույց տնային պայմաններում կրթություն ստացող և դպրոցական սննդից զրկված երեխաներին սննդի չոր փաթեթներ տրամադրելու նպատակով:

Դպրոցներից մեկում դիտարկող խումբը նկատեց, որ ԿԱՊԿՈՒ սովորողի համար նախատեսված սեղանն առանձնացված և դրված է մյուս սեղաններին ուղղահայաց դիրքով: Երեխան դիտարկման օրը բացակա էր, սակայն, ըստ ճաշարանի աշխատակիցների, նա նստում և ճաշում է մյուս երեխաներից առանձին՝ ուսուցչի օգնականի հետ:

Ծնողների հետ ֆոկուս խմբային քննարկման ժամանակ մասնակիցներից մեկը, ով նաև աշխատում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, ընդգծեց, որ դասաժամերից հետո ԿԱՊԿՈՒ երեխաներին ծառայություն մատուցելը շատ հաճախ դառնում է անհնար, որովհետև երեխաները սոված են լինում և չեն կարողանում կենտրոնանալ:

> *«Ես աշխատում եմ կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխաների հետ ու մեր կարգն այնպիսին է, որ իրավունք չունենք դասաժամից երեխա հանել և պարապել, բայց եթե երեխան ունի ծանր, խորը աստիճանի խնդիրներ, դեղորայք է ընդունում և դասից հետո նրան պահելն ու ծառայություն մատուցելը մեծ խնդիր է սնվելու տեսակետից: Եթե դասից ենք հանում՝ իմաստը ո՞րն է մեր աշխատանքի, իսկ դասից հետո սոված է, դա միշտ խնդիր է: Մամաները շուտ են տանում, ծառայությունը տուժում է: Դրա համար ծնողը նախընտրում է կամ չբերել կամ շաբաթական երկու անգամից մի անգամը թույլ տալ: Իսկ 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարաններում, որ այդքան էլ մեծ չեն, այսինքն տարրականն անցել են ու սնունդ չեն ստանում, իրենց համար ավելի մեծ խնդիր է: ժամը 2-ին ավարտում են, այլևս ի վիճակի չեն մնալ և ստանալ անհրաժեշտ ծառայությունը: Իրենք ասում են, որ սոված են, չեն կարող»:*

Մեջբերում ծնողների շրջանում իրականացրած ֆոկուս խմբային քննարկումից

Թիրախային դպրոցներից չորսում, ըստ տնօրենների, հատուկ սննդակարգով երեխաներ չկան: Երեք դպրոցում այդպիսի երեխաների մասին ծնողները զգուշացրել են տնօրեններին և խոհանոցի աշխատակիցներին՝ խնդրելով չմիջամտել երեխաների սնվելու գործընթացին և թողնել երեխայի հայեցողությանը: Դպրոցներից մեկի խոհարարը նշեց, որ այդպիսի երեխա դպրոցում կա, մինչդեռ տնօրենը հերքեց ՝ նշելով, որ ծնողի կողմից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, և հետևաբար, հատուկ մոտեցում չի ցուցաբերվում: ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցիչը հավաստեց, որ դպրոցում մատուցվող որևէ սննդատեսակ հակացուցված չէ հատուկ սննդակարգ ունեցող երեխաներին՝ բացառությամբ կոմպոտից և հացից: Ըստ ներկայացուցչի՝ բոլոր դպրոցների տնօրենները տեղեկացված են, որ եթե ծնողը ներկայացրել է հատուկ փաստաթուղթ, ապա շաքարային դիաբետի պարագայում երեխային չի տրվում կոմպոտ, իսկ գլյուտենի խնդիր ունեցող երեխաներին՝ հաց, բացառությամբ Լոռու և Տավուշի դպրոցների, որոնք թխում են ամբողջահատիկով հաց:

> *«Շաքարային դիաբետ ունեցող երեխային, ով լրացուցիչ ինսուլին է ստանում, չի կարելի մեր կոմպոտը, բայց եթե ծնողը չի ներկայացրել շաքարային դիաբետը հաստատող փաստաթուղթ, կոմպոտի 9 գրամ շաքարը երբևէ չի վնասի: Գլյուտենի դիետա պահող երեխան սպիտակ հացը պետք է չուտի: Այդ երեխան տանն էլ պիտի այդ հացը չուտի ու պետք է, որ սովոր լինի չուտել այդ հացը»:*

Մեջբերում ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցչի հետ իրականացրած խորացված հարցազրույցից

Դիտարկումների ընթացքում ուշադրություն է հատկացվել նաև սննդի նմուշառումների առկայությանը, ժամկետների պահպանմանն ու համապատասխան տարաների գործածությանը: Սննդի նմուշառումներ առկա էին թիրախային բոլոր դպրոցներում, սակայն, որոշ դեպքերում, պահպանման համար ապակե տարաների փոխարեն կիրառվել են պլաստիկ տարաներ՝ ոչ ապակյա կամ ոչ մետաղական կափարիչներով: Նմուշառված կերակրատեսակների տարաների վրա երբեմն բացակայում էին նաև նմուշառման ամսաթվերը:

7. Սննդամթերքի գնումների գործընթացի իրականացման վերլուծություն

Դպրոցական սննդի կազմակերպման համար իրականացվող գնումները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Մոնիտորինգային թիմն ուսումնասիրել է 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար գնումների գործընթացի կազմակերպման ընթացքը, ինչի համար ուսումնասիրվել են գնառաջարկները, գնահատող հանձնաժողովների ձևավորման որոշումները, գնում կատարելու ընթացակարգի հայտարարության տեքստը հաստատելու և հայտերի բացման նիստերի արձանագրությունները, մատակարարների կողմից ստացված գնային առաջարկները և կնքված պայմանագրերը/ պայմանագրերի մասին հայտարարությունները:

Օրենքի պահանջով և գնումների ընթացակարգի ապահովման նպատակով տնօրենների կողմից ձևավորվում են գնային առաջարկները գնահատող հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով/ներ): Վերջիններիս կազմը հիմնականում անփոփոխ է, ինչն ըստ տնօրենների, պայմանավորված է արդեն իսկ ունեցած փորձառությամբ և լիազորությունների ու պարտականությունների շրջանակի մասին հստակ պատկերացմամբ: Հարցազրույց իրականացվել է գնումների գնահատող հանձնաժողովի 16 անդամի և գնումների 4 համակարգողի հետ: Հանձնաժողովի անդամների հետ իրականացրած հարցազրույցները

ցույց տվեցին, որ վերջիններիս գործառույթները սահմանափակվում են իրենց ստորագրությունն անհրաժեշտ փաստաթղթերի վրա դնելով և պարզ չէր՝ արդյո՞ք նրանք ներկա են գտնվում գնառաջարկների գնահատման նիստերին: Այս մտահոգությունները խորացան դպրոցներից մեկի հանձնաժողովի անդամի հետ հարցազրույցի ժամանակ, երբ վերջինս մերժեց հարցազրույցը ձայնագրելու մեր խնդրանքը՝ նշելով, որ «...հանձնաժողովի աշխատանքները ձևական բնույթ են կրում, առհասարակ ամեն ինչ որոշվում է դպրոցի տնօրենի կողմից, բոլորը համաձայնվում են...»:

Թիրախային երկու մարզերից մեկի դպրոցներն առավելապես հակված են հրավիրել գնումների համակարգող, մինչդեռ մյուս մարզի դպրոցներում համակարգողի գործառույթները կատարում են հաշվապահները: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են պետական գնումների պաշտոնական կայքում 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար հայտարարված մրցույթներին առնչվող փաստաթղթերը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հրավիրված մասնագետի հետ համագործակցությունն առավելագույնս ապահովում է գործընթացի թափանցիկությունը, ինչն արտահայտվում է պետական գնումների պաշտոնական կայքում բոլոր փաստաթղթերի առկայությամբ: Սա նաև այն դեպքում, երբ գնման բազային միավորից ցածր գնման առարկայով գնումների դեպքում առկա չէ փաստաթղթերի հրապարակման օրենքի պահանջ:

Գնումներին առնչվող փաստաթղթերի վերլուծության ժամանակ մոնիտորինգային թիմի ուշադրության կենտրոնում հայտնվեց դպրոցներից մեկի գնահատող հանձնաժողովի երկրորդ նիստի արձանագրությունը, համաձայն արձանագրության 2-րդ կետ՝ գնումների գործընթացի մասնակցության հայտ է ներկայացրել 3 անհատ ձեռնարկատեր, մինչդեռ նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն հրավերի սահմանված պահանջներին համապատասխանող մասնակիցների շարքում նշված է նաև չորրորդ մասնակցի անունը: Վերջինիս անունը բացակայում է նաև նույն արձանագրության 6-րդ կետից, որտեղ ներկայացված են մասնակիցների առաջարկած գները՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար, մինչդեռ այդ նույն կազմակերպությունը նույն արձանագրության համաձայն հաղթող է ճանաչվել սննդամթերքի երկու չափաբաժնի մասով: Նույն դպրոցի առնչությամբ առկա է ևս մեկ անհստակություն. հաղթող ճանաչված կազմակերպություններից մեկի հետ կնքված պայմանագրում նշված պայմանագրային արժեքը երկու անգամ ցածր է արձանագրությամբ նշված արժեքից: Հայտնաբերված անհամապատասխանությունների ճշգրտման նպատակով մոնիտորինգային խումբը հարցում է ուղարկել դպրոց՝ խնդրելով վերոհիշյալ անհստակությունների առնչությամբ տալ պարզաբանում: Դպրոցից ստացված պատասխանում նշված է, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, մասնավորապես՝ արձանագրությունում նշված չորրորդ անհատ ձեռնարկատերը երբևէ չի մասնակցել գնման գործընթացին: Հարցման պատասխանին կից դպրոցը ճշգրտել և ներկայացրել է գնահատող հանձնաժողովի երկրորդ նիստի արձանագրությունը, որտեղ հաղթող ճանաչված կազմակերպությունների շարքից հեռացվել է չորրորդ անհատ ձեռնարկատիրոջ անունը: Հարցման պատասխանի համաձայն՝ հաղթող ճանաչված կազմակերպություններից մեկի առնչությամբ արձանագրությունում և կնքված պայմանագրում առկա սննդամթերքի արժեքի անհամապատասխանությունը, ըստ դպրոցի պարզաբանումների, ևս տեխնիկական վրիպակի հետևանք է, և գնումները կատարվել են կնքված պայմանագրերի սահմաններում:

Փաստաթղթային վերլուծության արդյունքում նաև պարզ դարձավ, որ 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար սննդի ձեռքբերման գործընթացի համար

անհրաժեշտ աշխատանքները մեկնարկել են օգոստոս ամսին, իսկ մրցույթների հայտերի բացման նիստերը, մատակարարների ու դպրոցների միջև պայմանագրերի կնքումը դպրոցներ մեծ մասում իրականացվել է սեպտեմբերին, ինչի հետևանքով երեխաներին սնունդ մատուցվել է ընդհուպ 15 օր ուշացմամբ: Այս իրավիճակի պատճառ դպրոցների տնօրենները նշում էին գնումների նախապատրաստական աշխատանքները: Դպրոցներից մեկը նույնիսկ սննդի կազմակերպումը սկսել է սեպտեմբերի 19-ից՝ նշելով, որ ունեին «վերանորոգման և խոհանոցի երկրորդ աշխատակցի խնդիր»: Գնումների համակարգողներից մեկն իր հարցազրույցում սննդի կազմակերպման ուշացման պատճառ նշել է սննդակարգերի ու դրանց քանակին առնչվող անհստակությունները և գործընթացի մեկնարկի պահին դպրոցների բյուջեների չհաստատված կարգավիճակը:

> *«Մեկ դպրոցներն ասել են հրապարակեք, բայց մենք չենք հրապարակել, որովհետև անընդհատ փոփոխվում են սննդակարգերը, քանակը և այլն: Դրա համար միշտ սպասել ենք: Սպասել ենք, ուղարկել են, ու միանգամից սկսել ենք գործընթացը՝ գնումների պլան, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով ու միանգամից մրցույթները հրապարակել ենք: Այսպիսի հարց էլ կա. ասում են պայմանագիր դեռ չկա, իրենք (մատակարարները) մտածում են, որ առանց պայմանագիր չի լինի: Հիմա մի մատակարար կա, ինքը մտածում է առանց փաստաթուղթ չի լինի, բայց մրցույթի մեջ հստակ սահմանված նորմ կա, որ կարող ես մատակարարումն անել մինչ պայմանագրի կնքումը: Ժամկետների ուշացում կա, բայց դրա մեղավորը ոչ դպրոցն է, ոչ մենք, ոչ էլ մատակարարը: Հիմնականում ուշ է ծանուցվել, դա է պատճառը»:*
>
> **Մեջբերում գնումների համակարգողի հետ իրականացրած խորացված հարցազրույցից**

> *«Այստեղ մի նրբություն կա, այո դու գիտես, որ սնունդ ես տալու, բայց նաև հստակ չէ: Ծրագիրը կարող է դադարի, ինչ-որ բան լինի, օրինակ՝ այս կորոնայի պայմաններում մենք չգիտեինք՝ տալու ենք, թե՝ չենք տալու: Ես, ենթադրենք, գնայի մրցույթ դնեի, մարդը շահել է, պիտի գա, քեզ ասի՝ պայմանագիր կապենք, իսկ այդ ֆինանսը չկա»:*
>
> **Մեջբերում տնօրենի հետ իրականացրած խորացված հարցազրույցից**

ԿՁՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի ներկայացուցչի հավաստմամբ սննդի կազմակերպման ուշացման պատճառը գնումների գործընթացի ուշ մեկնարկն է: Նմանատիպ իրավիճակներից խուսափելու համար 2023 թվականի հունվար-մայիս ամիսների համար դպրոցները նախարարությունից հրահանգավորվել են նախատեսվող գնումների գործընթացն ավարտել դեկտեմբեր ամսվա ընթացքում, սակայն մոնիտորինգային թիմը սննդի կազմակերպման ուշացում արձանագրել է նաև 2023 թվականի հունվար ամսին: Սա ցույց է տալիս, որ ուշացումները պայմանավորված են աշխատանքների ոչ պատշաճ կազմակերպմամբ:

Տնօրենների հետ հարցազրույցների ժամանակ անդրադարձ կատարվեց սննդամթերքի գնման համար հայտարարված մրցույթին արձագանքած տնտեսվարողների սակավությանը և դրա պատճառներին: 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար նախատեսված սննդամթերքի գնումների համար թիրախային դպրոցներից միայն մեկն է ստացել հինգ գնառաջարկ, որից չորսը եղել են ընդհանուր մթերքների և միայն մեկը՝ հացի մատակարարման համար: Մնացած դպրոցները հիմնականում ստացել են 2 գնառաջարկ,

որից մեկը հացի, մյուսը՝ ընդհանուր սննդամթերքների համար: Մրցույթներին մասնակցության հայտ ներկայացնելու ցածր ցուցանիշներն, ըստ տնօրենների, պայմանավորված է շուկայում ապրանքների գների տատանումներով: Խնդիրն ավելի է խորանում փոքր և կենտրոնից հեռու բնակավայրերի դպրոցների պարագայում:

> *«Դժվարությունն այն է, որ ոչ բոլորն են ցանկանում մասնակցել մրցույթին՝ պայմանավորված գների տատանմամբ, դա մեծ խնդիր է իրենց (մատակարարների) համար դառնում, տեղափոխման հետ կապված և այլն: Մարդիկ վստահ չեն լինում, որ մի քանի ամիս հետո ամեն ինչ նույնը կլինի»:*

Մեջբերում տնօրենի հետ իրականացրած խորացված հարցազրույցից

> *«Մենք գյուղական համայնքներում, մանավանդ փոքր դպրոցներում, մատակարարման խնդիր ունենք: Մատակարարն ուզում է մի ամսվա մթերքը մատակարարել միանգամից, ինչը նպատակահարմար չէ: Շատերի հետ եմ զրուցել: Ասում են, որ ֆինանսապես ձեռնտու չէ գյուղ ամեն շաբաթ, ամեն օր այս քանակի սնունդ տանելը»:*

Մեջբերում տնօրենի հետ իրականացրած խորացված հարցազրույցից

Մատակարարների հետ առաջացած ընդգծված դժվարություններ տնօրենները չեն առանձնացրել և համագործակցությունը համարում են կայացած: Տնօրեններից միայն մեկը նշեց, որ, երբեմն, մատակարարները փորձում են շահեկան պայմաններ ստեղծել իրենց համար՝ ապրանքի որակի կամ քաշի հաշվին: Եղել են վատորակ ապրանքը հետ ուղարկելու և նորը պահանջելու դեպքեր:

Տնօրենների կողմից եղան առաջարկներ սննդամթերքի գնման և մատակարարման գործընթացը պատվիրակել արտաքին կազմակերպության, իսկ սննդի պատրաստման գործընթացը թողնել դպրոցին: Տնօրեններից մեկն էլ իր խոսքում նշեց, որ նախընտրելի է սննդի ողջ կազմակերպումն իրականացնել արտաքին կազմակերպության կողմից՝ դպրոցի վերահսկողությամբ: Տնօրեններից շատերը նշել են, որ դպրոցական սննդի կազմակերպման համար հատկացված գումարներից գոյացել են չծախսված միջոցներ, ինչը, հիմնականում, պայմանավորված է կորոնավիրուս համավարակով, երբ տաք սնունդ տրամադրող դպրոցները սկսեցին չոր սննդի փաթեթներ հատկացնել երեխաներին: Չծախսված միջոցների առաջացման պատճառ կարող է լինել նաև սննդի կազմակերպման ուշացումները: Տնօրենների հավաստմամբ՝ չծախսված միջոցներն այլ նպատակով օգտագործելու իրավասություն չունեն: Առկա չեն հստակ ընթացակարգեր, որոնք կկարգավորեն առաջացած միջոցները դպրոցների այլ կարիքների բավարարմանն ուղղելու համար և դրանց վերաբաշխումը պետք է իրականացվի լիազոր մարմնի համաձայնությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ Տավուշի և Շիրակի մարզերի ընտրված դպրոցներում իրականացրած մոնիտորինգը հանգեցրեց դպրոցական սննդի կազմակերպմանն առնչվող մի շարք եզրակացությունների.

Եզրակացություններ

- «Դպրոցական սնունդ» ծրագիրը ողջունելի է ծնողների և դպրոցների տնօրենների կողմից, ովքեր հատկապես կարևորում են ծրագրի սոցիալ-կրթական բաղադրիչը: Սննդի կազմակերպման ժամին երեխաների ակնհայտ ոգևորվածությունը փաստում է, որ ծրագիրը սիրված է նաև երեխաների կողմից: Ծնողների հավաստմամբ՝ նույնիսկ քչակեր կամ ընդհանրապես սննդից չօգտվող երեխան մեծ ոգևորությամբ գնում է ճաշարան և նստում համադասարանցիների հետ մեկ սեղանի շուրջ:
- Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կերակրատեսակների նկատմամբ երեխաների նախապատվությունները տարբերվում են ըստ մարզերի և համայնքների: Երեխաները սնվում են ըստ նախասիրության, սակայն մեկից ավելի կերակրատեսակի մատուցումը հնարավորություն է տալիս ընտրել և քաղցը հագեցնել օրվա ճաշացանկով պատրաստված այլ կերակրատեսակով (օրինակ՝ եթե երեխան հրաժարվում է ապուրից, ապա սնվում է աղցանով): Կան նաև երեխաներ, ովքեր սնվում են միայն հացով կամ մրգով:
- Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ծնողները երեխայի հետ ուղարկում են հավելյալ սնունդ կամ գումար, որի հիմնական պատճառներն են դասերից հետո արտադասարանական խմբակների հաճախելը, դպրոցական սննդով չկշտանալը, դպրոցական սննդից հրաժարվելը: Հավելյալ սնունդ ուղարկելու պատճառներից է նաև այն հանգամանքը, որ մինչ սահմանված ժամին դպրոցական սննդի կազմակերպումը երեխաների մոտ սնվելու անհրաժեշտություն է առաջանում: Երեխայի հետ հավելյալ սնունդ կամ գումար ուղարկող ծնողները օրական ծախսում են 150-200 դրամ:
- Բոլոր դպրոցներում ծնողները կատարում են ներդրում «Դպրոցական սնունդ» ծրագրում: Ներդրումային գումարների չափի, հավաքագրման, տնօրինման և ծախսային ուղղությունների վերաբերյալ սահմանված չեն հստակ և ընդհանուր մեխանիզմներ: Ծնողների մեծամասնությունը տեղեկացված չէ՝ ովքեր են պահպանում և տնօրինում ներդրումային գումարը կամ ինչ նպատակով է այն ծախսվում: Ներդրումային գումարների և դպրոցներին բնամթերքի նվիրատվության ընթացակարգերը կարգավորելու և այն առավել թափանցիկ դարձնելու նպատակով ԿԶՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկը նախապատրաստում է ուղեցույց: Սակայն միայն ուղեցույցի առկայությունը բավարար չէ ծրագրում ծնողների ներգրավվածության խրախուսման և նրանց կողմից հետևողականության ապահովման համար:
- Դպրոց հաճախող ԿԱՊԿՈՒ երեխաները հիմնականում օգտվում են դպրոցական սննդից: Սակայն դպրոցների ճաշարանները խիստ անմատչելի են հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար: Որոշ դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաները ճաշում են մյուս երեխաների հետ միևնույն սեղանի շուրջ, սակայն նկատելի էին դեպքեր, երբ ԿԱՊԿՈՒ երեխան նստում է առանձին սեղանի մոտ՝ ուսուցչի օգնականի հետ: Դպրոց չհաճախող և տնային ուսուցում ստացող ԿԱՊԿՈՒ երեխաները զրկված են տաք սննդի իրենց չափաբաժնից:

- ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված է մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում, ինչի համար երեխան դասաժամերից հետո ստիպված է լինում մնալ դպրոցում: Հաճախ աջակցության տրամադրումը դառնում է անհնար, քանզի դասաժամերից հետո երեխայի մոտ առաջ է գալիս սնվելու անհրաժեշտություն, որն էլ ազդում է վերջինիս ուշադրության կենտրոնացման վրա:
- Հատուկ սննդակարգի կարիք ունեցող երեխաները սնվում են մյուս երեխաների հետ միևնույն ճաշացանկով: Դպրոցում մատուցվող կերակրատեսակները, բացառությամբ կոմպոտից և հացից, հակացուցված կամ արգելված չեն հատուկ սննդակարգով սնվող երեխաներին:
- Դպրոցների ճաշարաններում և խոհանոցներում հիմնականում ապահովված է սանիտարահիգիենիկ պայմանները: Խոհանոցները հագեցած են անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով: Որոշ դպրոցներ ունեն նոր գույքի՝ սեղանների, աթոռների և կաթսաների կարիք:
- Որպես կանոն, դպրոցներում խոհանոցային աշխատանքներում ներգրավվում են 2-4 աշխատակից և խոհանոցի մեկ աշխատակցի համար սահմանված նվազագույն աշխատավարձը բաժանվում է 2-4 անձի միջև, ինչի արդյունքում յուրաքանչյուր աշխատակից ստանում է նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ: Երբեմն, խոհարարները առձեռն ստանում են հավելավճար՝ ծնողական ներդրումային գումարներից:
- Սննդամթերքի գնումների գործընթացի ուշ մեկնարկի պատճառով որոշ դպրոցներում սննդի կազմակերպումն ուշանում է ընդհուպ երկու շաբաթով:
- Սննդի համար հատկացված գումարներից դպրոցներում առաջանում են չծախսված միջոցներ (օրինակ՝ COVID-19-ի ժամանակահատվածում տաք սննդից չոր սննդի փաթեթների անցմամբ պայմանավորված): Առաջացած միջոցները դպրոցների տնօրեններն այլ կարիքների ուղղելու իրավասություններ և ճկունություն չունեն և դրանք այլ նպատակների ծառայեցնելու ընթացակարգեր սահմանված չեն:
- Գնումների հրավիրված մասնագետի հետ համագործակցությունը գնումների գործընթացը դարձնում է առավել թափանցիկ և ապահովում բոլոր փաստաթղթերի հասանելիություն պետական գնումների պաշտոնական կայքէջում:

Մոնիտորինգի ընթացքում ընդգծվեց, որ ծրագիրն ունի բարելավման կարիք: Հանդիպումների և հարցազրույցների ժամանակ շահագրգիռ կողմերը ներկայացրել են առաջարկներ,[15] որոնք կարող են նպաստել ծրագրի արդյունավետության բարձրացմանը:

Առաջարկներ

Սննդի կազմակերպմանն առնչվող առաջարկներ

- Սահմանել սննդի կազմակերպման համար այնպիսի ժամեր, որի դեպքում որևէ դասապրոցես չի ընդհատվի: Ցանկալի է նաև սննդի մատուցումը սկսել ավելի վաղ, քանզի մինչ սահմանված ժամը երեխաները սնվում են իրենց հետ բերած սննդով և հրաժարվում են դպրոցական սննդից՝ այլևս չունենալով դրա կարիքը: (**Դպրոց, ԿԳՄՍ**)
- Մշակել նախագիծ բարձր դասարանների սովորողներին ևս «Դպրոցական սնունդ» ծրագրում ներգրավելու համար, քանզի բարձր դասարաններում սովորող երեխաներն

[15] Ներքոշարադրված առաջարկներն արվել են շահագրգիռ անձանց և ուսումնասիրության մասնակիցների կողմից:

ավելի երկար ժամանակահատված են անցկացնում դպրոցում և առաջ է գալիս սնվելու անհրաժեշտություն: Ծրագրի ներդրումը բարձր դասարաններում նաև կապահովի սոցիալական հավասարություն: (**ԿԳՄՍ**)

- Աղցանը մատուցել առանձին ափսեներով՝ յուրաքանչյուր երեխայի համար սահմանված չափաբաժնով, ինչը երեխայի համար չի առաջացնի լրացուցիչ անհարմարություններ և չի խախտվի սահմանված չափաբաժինը: (**Դպրոց**)
- Աղցանը և հիմնական կերակրատեսակը մատուցել առանձին ափսեներով, որպեսզի ոչ նախընտրելի կերակրատեսակը չուտելու դեպքում երեխան չհրաժարվի նաև նախընտրելի կերակրատեսակից: (**Դպրոց**)

Ճաշացանկին առնչվող առաջարկներ

- Փոխարինել ոլոռով ապուրն այլ կերակրատեսակով, քանզի այն, ըստ ծնողների, դժվարամարս է և առաջացնում է փորացավ երեխաների մոտ: (**ԴՍԵԲ**)
- Ճաշացանկում ավելացնել կաթնամթերք (մածուն, թթվասեր, կաթնաշոռ, կաթնային ապուրներ), թխուկներ: Ավելացնել մատուցվող մրգի տեսականին համաձայն ԿՁՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի սննդաբանների կողմից առաջարկված լրացուցիչ ճաշացանկի:(**ԴՍԵԲ, Դպրոց**)
- Պանիրը ներառել ամենօրյա ճաշացանկում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հացն ու պանիրը նախընտրելի են մեծամասնության համար: (**ԴՍԵԲ**)

Ճաշարաններում պայմանների բարելավմանն առնչվող առաջարկներ

- Ճաշարաններում կամ դրանց մուտքի մոտ տեղադրել լվացարաններ՝ տաք ջրով և ծորակների ինքնակարգավորվող աշխատանքով, ինչպես նաև ապահովել օճառ և ձեռքերը չորացնելու միջոցներ: (**ԿԳՄՍ, Դպրոց, Համայնք**)
- Սնվելուց առաջ և հետո ապահովել երեխաների լվացվելը տաք ջրով՝ զերծ մնալով այլ ախտահանող միջոցների կիրառումից: (**Դպրոց)**
- Ճաշարանների պատերը նկարազարդել թեմատիկ նկարներով, ինչը կփոխի մթնոլորտը և ճաշի ժամին կապահովի երեխաների բարձր տրամադրությունը: **(Դպրոց, Համայնք)**
- Ճաշարաններում ապահովել բավարար ջերմաստիճան և լուսավորություն: (**ԿԳՄՍ, Դպրոց)**

Այլ առաջարկներ

- Վերանայել խոհարարների սահմանված թիվը և վարձատրության չափը՝ ապահովելով արժանապատիվ աշխատանքային պայմաններ: (**ԿԳՄՍ**)
- ԿԱՊԿՈՒ երեխաներին դասաժամերից հետո մատուցվող աջակցությունից առաջ ապահովել սննդով՝ ստեղծելով համապատասխան պայմաններ: (**ԿԳՄՍ, Դպրոց**)
- Դիտարկել սննդամթերքի գնման և մատակարարման գործընթացը կամ սննդի ամբողջական կազմակերպումը արտաքին կազմակերպությանը պատվիրակելու հնարավորությունները, հնարավոր ռիսկերն ու արդյունավետությունը: (**ԿԳՄՍ**)

Մոնիտորինգային թիմն իր կատարած ուսումնասիրությունների հիման վրա առաջարկում է.

Մննդի կազմակերպմանն ու ճաշացանկին առնչվող առաջարկներ

- Մշակել ավելացած սննդի խոտանման ընդհանուր մոտեցում (օրինակ՝ ավելացած սնունդը կարող է օգտագործվել դպրոցին կից որպես սոցիալական ձեռնարկատիրություն գործող սմարթ գոմերում/ հավաքներում): (**ԿԳՄՍ**)
- Մննդի կազմակերպման ժամերին փոխել երեխաների տեղերը սեղանի շուրջ, քանզի սնվելուց երեխաները հաճախ հետևում են մեկը մյուսի օրինակին: (**Դպրոց**)
- Ճաշացանկում ներառված այն հիմնական կերակրատեսակները, որոնք դպրոցի խոհանոցի աշխատակազմը դիտարկում է որպես ոչ նախընտրելի երեխաների կողմից, փոխարինել ԿՁՆԱԿ հիմնադրամի ԴՍԵԲ հիմնարկի կողմից դպրոցներին լրացուցիչ ճաշացանկում ներառված կերակրատեսակներով: (**Դպրոց**)

Ճաշարանների, խոհանոցների հագեցվածությանն ու աշխատակազմին առնչվող առաջարկներ

- Ճաշարանում երեխաներին սնունդ մատուցել կերամիկական սպասքով՝ բացառելով պլաստիկ տարբերակները: (**Դպրոց**)
- Ապահովել ճաշարաններում մեկ սեղանի շուրջ նստող երեխաների օպտիմալ քանակը, որպեսզի սնվելուց երեխաները չխանգարեն միմյանց: (**Դպրոց**)
- Վերանայել դպրոցների տեխնիկական և առաջնային նշանակության կահ-կահարասու առկայությունը, մաշվածությունը, վերազինել դպրոցները: (**ԿԳՄՍ**)

Ծնողական ներդրումներին առնչվող առաջարկներ

- Ծնողներին ծանոթացնել դպրոցում մատուցվող ճաշացանկին, դրանում ներառված սննդամթերքների ընտրության կարևորությանը, թույլատրվող և չթույլատրվող սննդամթերքի ցանկին: Սա հնարավորություն կտա ծնողներին ավելի ճիշտ կողմնորոշվել ներդրումային գումարներով գնումներ կատարելու հարցում, ինչպես նաև կնպաստի դպրոցից դուրս երեխաների սննդակարգի ճիշտ կազմակերպմանը (գործընթացն իրականացվում է մի քանի մարզերում, ակնկալվում է շարունակականություն): (**ԿԳՄՍ**)
- Ծնողների շրջանում, հատկապես գյուղական բնակավայրերում, բարձրացնել իրազեկվածությունը բնամթերքի տեսքով դպրոցին նվիրատվություն կատարելու եղանակների և հնարավորությունների մասին: Սահմանել բնամթերքի ընդունման ընդհանրացված մոտեցում: (**ԿԳՄՍ**)
- Յուրաքանչյուր դպրոցի համար ստեղծել ծնողական ներդրումային գումարների համար առանձնացված հաշվեհամար, որին յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի սկզբում ծնողները կկատարեն մեկանգամյա փոխանցում: Սա հնարավորություն կտա ծնողական ներդրումներից առաջացած եկամուտներն ու ծախսերը դարձնել առավել թափանցիկ:(**ԿԳՄՍ**)
- Յուրաքանչյուր ամիս վերոհիշյալ հաշվեհամարի վերաբերյալ հաշվետվությունները՝ մուտքային և ելքային ծախսերը, փակցնել դպրոցում՝ ծնողների համար տեսանելի վայրում:(**ԿԳՄՍ, Դպրոց**)

ԿԱՊԿՈՒ երեխաներին առնչվող առաջարկներ

- Ճաշարաններում ԿԱՊԿՈՒ երեխաներին նստեցնել բոլոր երեխաների հետ՝ ապահովելով նրանց ներգրավումը ընդհանուր խմբում (**Դպրոց**):

Գնումների գործընթացին առնչվող առաջարկներ

- Գնումների մեկնարկի, ընթացքի ու Ժամկետների պահպանման առնչությամբ սահմանել վերահսկողություն և պատասխանատվության մեխանիզմներ: (**ԿԳՄՍ)**
- Սննդամթերքի ձեռքբերման համար գնումների գործընթացը սկսել ուսումնական տարվա մեկնարկից նվազագույնը մեկ ամիս առաջ, որպեսզի սննդի կազմակերպումն իրականացվի ժամանակին: (**ԿԳՄՍ, Դպրոց**)
- Հնարավորություն ընձեռել սննդի համար հատկացված առկա չծախսված միջոցների վերաբաշխումն իրականացնել տվյալ դպրոցի կարիքների գնահատման և առաջնահերթությունների հիման վրա և ուղղել դրանց լուծմանը: (**ԿԳՄՍ**)
- Սահմանել հստակ ընթացակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն դպրոցների տնօրեններին վերաբաշխել սննդի համար պետական բյուջեից հատկացված գումարներից առաջացած միջոցները խոհանոցային և ճաշարանային պայմանների բարելավման, նոր կահույքի, տեխնիկայի և սպասքի ձեռքբերման համար: (**ԿԳՄՍ**)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 16 դեկտեմբերի 2016թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=110820
2. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, https://www.arlis.am/
3. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, https://escs.am/am
4. Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության գնումների համակարգ, https://gnumner.minfin.am/
5. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 04-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Հանրակրթություն» ծրագրի «Տարրական ընդհանուր հանրակրթություն» և «Նախադպրոցական կրթություն» միջոցառումների շրջանակում սովորողներին սննդի կազմակերպման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվարկման նորմատիվները հաստատելու կարգի մասին, 26 հունվարի 2022 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159794
6. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք, 1 դեկտեմբերի 2014թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683
7. Դպրոցական կայքեր, https://schoolsite.am/
8. «Արտաշատի 3-րդ դպրոցի ճաշարանի և խոհանոցի գործունեությունը կասեցվել է», 18 հոկտեմբերի 2019թ., https://www.irazek.am/hy/news/12713
9. «ՄԱԿ-Ի Պարենի համաշխարհային ծրագիրը ՀՀ կառավարությանն է փոխանցել ևս երկու մարզում «Դպրոցական սնունդ» ծրագրի կառավարումը», Միավորված ազգերի կազմակերպություն Հայաստան, 18 նոյեմբերի, 2021, https://t.ly/RmBp
10. «Շիրակում կասեցվել է երկու դպրոցի ճաշարանների արտադրական գործունեությունը», Հայաստանի Հանրապետության Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, 27 դեկտեմբերի 2022թ., https://www.snund.am/hy/page/news/621/74
11. “Ready to learn and thrive: school health and nutrition around the world”, UNESCO,United Nations Children's Fund, World Food Programme, 2023,https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000384421

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Տնօրենների հետ խորացված հարցազրույցի ուղեցույց

Ներկայանալ, ներկայացնել ծրագրի նպատակը, ստանալ վրույցը ձայնագրելու համաձայնություն:

Տևողությունը՝ 20-30 րոպե

Տնօրենների հետ խորացված հարցազրույցի նպատակն է.

- *պարզել գնումների կազմակերպման ընթացակարգերն ու խոչընդոտները,*
- *պարզել ծախսերի արդյունավետությունը,*
- *հավաքագրել գնումների գործընթացի դյուրացման վերաբերյալ առաջարկներ,*
- *պարզել սննդի գնման գործընթացի համարձևավորված հանձնաժողովների կազմը,ձևավորման ժամկետները, գնումների գործընթացում ներգրավվածության աստիճանը,*
- *պարզել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթին դիմած կազմակերպություններին և վերջիններիս ներկայացրած գնառաջարկները:*

Ընդհանուր հարցեր.

1. Որքա՞ն ժամանակ է, որ Ձեր դպրոցում գործում է դպրոցական սնունդ ծրագիրը: Որքանո՞վ են ծնողները բավարարված այս ծրագրից:
2. Դպրոցում կա՞ն աշակերտներ, ովքեր չեն օգտվում դպրոցական սննդից: Եթե այո՝ քանիսն են:
3. Արդյո՞ք դպրոցում կան կրթության առանձնահատուկ պայմանի կարիքներ ունեցող երեխաներ: Արդյո՞ք նրանք որևէ դժվարություն ունեն սննդից օգտվելու հետ կապված: Ի՞նչ դժվարություններ կան: Ի՞նչ լուծումներ եք գտել:
4. Արդյո՞ք ծնողները լրացուցիչ գումար են հավաքում սննդի համար: Եթե այո՝ ինչո՞ւ: Ինչպե՞ս է դա կազմակերպվում:
5. Երբևէ ծնողները հանդես եկե՞լ են սննդի վերաբերյալ իրենց առաջարկներով: Եթե այո, ապա ինչպիսի՞ առաջարկներ եք ստացել:
6. Ի՞նչ դժգոհություններ են ունենում ծնողները դպրոցական սննդից: Ինչպե՞ս եք դրանք կարողանում լուծել:
7. Ի՞նչ կառաջարկեք դպրոցական սննդի ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Գնումների ընթացակարգի վերաբերյալ հարցեր.

8. Խնդրում եմ պատմեք, թե ինչպե՞ս եք այս տարի կազմակերպել գնումների գործընթացը:
9. Ինչպե՞ս է կատարվել մատակարարող կազմակերպության/ների ընտրությունը:
10. Քանի՞ կազմակերպություն է դիմել:
11. Նախկինում աշխատե՞լ եք այդ կազմակերպությունների հետ: Եթե այո, ապա որքա՞ն ժամանակ:
12. Որտե՞ղ և ե՞րբ է տեղադրվել մրցույթի հայտարարությունը:
13. Որո՞նք են գնումների գործընթացի հիմնական դժվարությունները, սահմանափակումները:

14. Ի՞նչ լուծումներ կարող եք առաջարկել նշված դժվարություններից խուսափելու համար:

Հանձնաժողովների վերաբերյալ հարցեր.

15. Ովքե՞ր են գնումների հանձնաժողովի անդամները և ինպե՞ս են ընտրվել:
16. Որո՞նք են հանձնաժողովների հետ աշխատանքի դժվարությունները: Ի՞նչ կփոխեիք այդ գործընթացներում՝ դրանք հեշտացնելու, ավելի արդյունավետ դարձնելու համար:

Հավելված 2. Գնումների համակարգողների հետ խորացված հարցազրույցի ուղեցույց

Ներկայանալ, ներկայացնել ծրագրի նպատակը, ստանալ վրույցը ձայնագրելու համաձայնություն:

Տևողությունը՝ 15-20 րոպե

Գնումների համակարգողի հետ խորացված հարցազրույցի նպատակն է .

- *պարզել գնումների ընթացակարգում և գնումների վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ նրա դերը և լիազորությունները,*
- *պարզել գնումների կազմակերպման ընթացակարգերն ու խոչընդոտները,*
- *պարզել ծախսերի արդյունավետությունը,*
- *հավաքագրել գնումների գործընթացի դյուրացման վերաբերյալ առաջարկների հավաքագրում:*

Ընդհանրական հարցեր

1. Խնդրում եմ ներկայացեք, քանի՞ տարեկան եք և ինչքա՞ն ժամանակ է, որ ընդգրկված եք գնումների գործընթացում:
2. Որքա՞ն ժամանակ է, որ ներգրավված եք դպրոցներում սննդի գնման գործընթացում որպես համակարգող:
3. Քանի՞ դպրոցի հետ եք համագործակցում:

Դպրոցում երեխաների սննդի կազմակերպման վերաբերյալ հարցեր.

4. Ո՞րն է ձեր գործառույթը դպրոցական սննդի կազմակերպման գործում:
5. Սննդի կազմակերպման հարցում դպրոցն ի՞նչ իրավասություններ ունի (օրինակ մրցույթ հայտարարել, մատակարար ընտրել, ճաշացանկ որոշել և այլն):

Գնումների գործընթացի վերաբերյալ հարցեր.

6. Ինչպե՞ս է կազմակերպվում գնումների գործընթացը դպրոցական սննդի ծրագրի համար:
7. Ինչպես է կայանում հայտերի բացման նիստը: Ովքեր են մասնակցում դրան:
8. Ինչպե՞ս է կատարվում մատակարարող կազմակերպության/ների մրցույթը և ընտրությունը:
9. Միջին հաշվով քանի՞ կազմակերպություն է մասնակցում դպրոցական սննդի կազմակերպման համար սննդամթերքի մատակարարման մրցույթին: Դրանք ավելացե՞լ են թե՞ պակասել նախորդ տարիների համեմատ, ինչո՞ւ:
10. Նախկինում աշխատե՞լ եք այդ կազմակերպությունների հետ: Եթե այո, ապա որքա՞ն ժամանակ:
11. Որո՞նք են գնումների գործընթացի հիմնական դժվարությունները, սահմանափակումները:
12. Ի՞նչ լուծումներ կարող եք առաջարկել նշված դժվարություններից խուսափելու համար: Ի՞նչ կփոխեիք այդ գործընթացներում դրանք հեշտացնելու, ավելի արդյունավետ դարձնելու համար:

Հավելված 3. Գնումների գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների անդամների հետ խորացված հարցազրույցի ուղեցույց

Ներկայանալ, ներկայացնել ծրագրի նպատակը, ստանալ կրույցը ձայնագրելու համաձայնություն:

Տևողությունը՝ 15-20 րոպե

Գնումների գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների անդամների հետ խորացված հարցակրույցի նպատակն է .

- *պարզել գնումների ընթացակարգում և գնումների վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ նրանց դերը և լիազորությունները,*
- *պարզել գնումների կազմակերպման ընթացակարգերն ու խոչընդոտները,*
- *ծախսերի արդյունավետությունը,*
- *գնումների գործընթացի դյուրացման վերաբերյալ առաջարկների հավաքագրում:*

Ընդհանրական հարցեր.

1. Խնդրում եմ ներկայացեք, քանի՞ տարեկան եք, քանի՞ տարի եք աշխատում դպրոցում:
2. Ինչքա՞ն ժամանակ է, որ ներգրավված եք սննդի գնումների գնային առաջարկները գնահատող հանձնաժողովի կազմում:
3. Ի՞նչ պաշտոն եք զբաղեցնում այդ հանձնաժողովում և ինչպե՞ս եք նշանակվել:

Դպրոցում սննդի գնման գործընթացի վերաբերյալ հարցեր.

1. Ե՞րբ է կայացել հայտերի բացման նիստը, արդյո՞ք մասնակցել եք հայտերի բացման նիստին: Ինչպե՞ս է կազմակերպվել այդ գործընթացը:
2. Սննդի կազմակերպման հարցում դպրոցն ի՞նչ իրավասություններ ունի (օրինակ՝ մրցույթ հայտարարել, մատակարար ընտրել, ճաշացանկ որոշել և այլն):
3. Ո՞րն է ձեր գործառույթը դպրոցական սննդի կազմակերպման գործում:
4. Որո՞նք են գնումների գործընթացի հիմնական դժվարությունները, սահմանափակումները:
5. Ի՞նչ լուծումներ կարող եք առաջարկել նշված դժվարություններից խուսափելու համար: Ի՞նչ կփոխեիք այդ գործընթացներում՝ դրանք հեշտացնելու, ավելի արդյունավետ դարձնելու համար:
6. Սննդամթերքի ձեռքբերման համար ինչպե՞ս եք այս տարի կազմակերպվել գնումների գործընթացը:
7. Քանի՞ մատակարարի հետ է աշխատում դպրոցն այս պահին: Ի՞նչ են մատակարարում դպրոցին:
8. Ինչպե՞ս է կատարվել մատակարարող կազմակերպության/ների մրցույթը և ընտրությունը:
9. Քանի՞ կազմակերպություն է դիմել: Դրանք ավելացե՞լ են թե՞ պակասել նախորդ տարիների հետ համեմատած, ինչո՞ւ:
10. Նախկինում աշխատե՞լ եք այդ կազմակերպությունների հետ: Եթե այո, ապա որքա՞ն ժամանակ:
11. Կա՞ն կառույցներ, որոնք վերահսկում են դպրոցում երեխաների սննդի որակի գնահատումն ու գնումների գործընթացը: Որո՞նք են դրանք
12. Ի՞նչ դժվարություններ են ծագում նրանց հետ համագործակցության ժամանակ:

Ինչո՞ւ:

13. Ի՞նչ առաջարկություններ ունեք դպրոցում երեխաների սննդի կազմակերպման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Հավելված 4. Դիտարկման քարտ

Դիտարկման քարտ N__

Մարզ _____

Համայնք _____

Դպրոց _____

Դիտարկման ամսաթիվ _____

Դիտարկման սկիզբ_____

Դիտարկման ավարտ _____

Դիտարկողներ_____

Դիտարկման տևողությունը՝ 30 րոպե

Բաժին 1. Սանիտարահիգիենիկ նորմեր (Այո/Ոչ/Մասամբ)

1.Մաքրության գնահատում.

Ճաշասենյակի մաքրություն.

- Բավարար
- Անբավարար

Եթե ճաշասենյակի մաքրությունն անբավարար է, նշել՝ ինչո՞ւ:

_____

Սեղանների մաքրություն.

- Բավարար
- Անբավարար

Եթե սեղանների մաքրությունն անբավարար է, նշել՝ ինչո՞ւ:

_____

2. Խոհարարի արտաքին տեսքը.

Խոհարարը սանիտարական հագուստով է (խալաթ, տաբատ, գլխարկ).

- Այո
- Ոչ
- Մասամբ

Խոհանոցի աշխատողները կրում են ոտնամաններ.

- Այո
- Ոչ
- Մասամբ

3) Մաքրության հետ կապված այլ դիտարկումներ և նշումներ.

---

4) Տաք ջրի և ախտահանիչ նյութերի առկայություն.

Սպասքի լվացման համար տաք ջուրը առկա է (համոզվե՛ք, որ տաք ջուր կա, խնդրե՛ք բացել ծորակը):

- Այո
- Ոչ

Քլորամին Б տարածքի, սարքավորումների, սպասքի, լվացարանների, լվացատաշտերի մաքրման համար.

- Այո
- Ոչ

Քացախաթթվի 1%-անոց լուծույթ դարակների համար.

- Այո
- Ոչ

Ախտահանիչ նյութերը առկա են(եթե օգտագործվում են վերը նշված նյութերը, ապա այս հատվածում նշել «Այո», եթե միայն մեկը՝ «Մասամբ»).

- Այո
- Ոչ
- Մասամբ

Ափսեների լվացում երեք տեղանոց լվացատաշտերում.

- Այո
- Ոչ

Բաժակների լվացում երկու տեղանոց լվացատաշտերում.

- Այո
- Ոչ

Բաժին 2. Բավարար կահավորում կա՝ սնունդ պատրաստելու, պահպանելու և բոլոր երեխաներին մատուցելու համար

5) Ցուցիչների գնահատում.

Սարքին տեխնիկան առկա է՝ էլեկտրական սալօջախ, ջրատաքացուցիչ, ջեռոց, սառնարան.

- Այո
- Ոչ
- Մասամբ

Մեկ սեղանի շուրջ նստող երեխաների քանակն օպտիմալ է.

- Այո
- Ոչ

- Մասամբ

Բավարար քանակի սպասք կա բոլոր երեխաների համար.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Սպասքն ունի վնասվածքներ.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Արդյո՞ք կան երեխաներ, ովքեր ունեն որևէ դժվարություն ճաշարան մտնելու, սնվելու համար և այդ պատճառով չեն օգտվում սննդից.
- Այո
- Ոչ

6) Դիտարկումներ ԿԱՊԿՈՒ երեխաների վերաբերյալ.

---

7) Նմուշառում.

Նվազագույնը 48 ժամ առաջ վերցված նմուշների առկայություն.
- Այո
- Ոչ

Համապատասխան տարաների կիրառում.
- Այո
- Ոչ

Տարաների վրա համապատասխան գրառումների առկայություն.
- Այո
- Ոչ

Բաժին 3. Սնունդը պատրաստված է ճաշացանկին համաձայն, բավարար քանակության և որակի (Այո/Ոչ/Մասամբ)

8) Ցուցիչների գնահատում.

Օրվա սնունդը համապատասխանու՞մ է օրվա ճաշացանկին.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Սնունդը պատրաստելու համար օգտագործված են միայն թույլատրելի մթերքները.

- Այո
- Ոչ
- Մասամբ

Պատրաստված սննդի քանակը բավարար է բոլոր երեխաներին.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Երեխաները բերում են հավելյալ սնունդ իրենց հետ.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Երեխաները կուշտ են մնում սնվելուց հետո.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Սնունդն ունի ախորժելի տեսք և հոտ.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Երեխաները հաճույքով են ուտում.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Երեխաները լվացվում են սնվելուց առաջ.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Սնունդը տաք էր.
- Այո
- Ոչ
- Մասամբ

Կան հատուկ սննդակարգ ունեցող երեխաներ.
- Այո
- Ոչ

9) Ինչ լուծում է տրված հատուկ սննդակարգի կարիք ունեցող երեխաների համար:

10) Ի՞նչ է պատրաստված եղել:

11) Ի՞նչ մթերք է օգտագործվել (հարցնել խոհարարից):

12) Քանի՞ երեխա էր օգտվում սննդից (հաշվել տեղում):

13)Ընդհանուր հարցրեք բոլոր երեխաներին առանց կոնկրետ երեխայի դիմելու. «Հաճույքո՞վ եք ուտում, կշտանու՞մ եք, ինչ կուզենայիք, որ փոխվեր ճաշացանկում»:

14) Եթե տեսնում եք երեխաների, ովքեր չեն ուտում, հարցրեք՝ ի՞նչն է պատճառը:

Բաժին 4. Լրացուցիչ դիտարկումներ

15) Սննդի անհամաչափ բաշխում:

16) Երեխաների դիմացից սնունդ վերցնելու դեպքեր:

17) Հավելյալ սնունդ պահանջելու դեպքերի առկայություն:

18) Ի՞նչ է արվում ավելացած սնունդը:

19) Ընդհանուր դիտարկումներ

Հավելված 5. Ծնողների հետ ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց

Տևողությունը 1 ժամ 30 րոպե:
Մասնակիցներ՝ 1-4 դասարանի աշակերտների 8-10 ծնող:
Քննարկման ամսաթիվ -
Քննարկման մասնակիցների թիվ-
Վայր, դպրոց -

Ներկայանալ, ներկայացնել ծրագրի և քննարկման նպատակը, ստանալ ձայնագրության համաձայնություն:
Ձայնագրությունն արվում է միայն տեխնիկական նպատակների համար: Ոչ մի անուն չի հիշատակվելու հաշվետվության մեջ: Տվյալներն ամփոփվելու են ընդհանրացված ձևով:

Ծնողների հետ ֆոկուս խմբային քննարկումների նպատակն է դուրս բերել սննդի հասանելիության ու որակի հետ կապված խնդիրները և լսել բարելավման վերաբերյալ առաջարկներ (*հնարավոր է, որ քննարկման ընթացքում բացահայտվեն այլ խնդիրներ: Այդ հարցերի շուրջ փորձե՛ք հնարավորինս շատ տեղեկություն ստանալ*):

Դպրոցական սննդի վերաբերյալ հարցեր.

1. Խնդրում եմ ներկայացե՛ք, քանի՞ տարեկան եք, ինչո՞վ եք զբաղվում, ո՞ր դասարանում է/են սովորում Ձեր երեխան/երը:
2. Բավարարվա՞ծ եք դպրոցում երեխաներին մատուցվող անվճար սննդից: Ինչո՞ւ: Մի փոքր մանրամասնե՛ք:
3. Որքա՞ն ժամանակ է, որ դպրոցում երեխաներին անվճար սնունդ է տրամադրվում:
4. Ի՞նչ սնունդ է դա, բերե՛ք օրինակներ:
5. Այս տարի ի՞նչ է նախատեսված ճաշացանկով:
6. Տեղյա՞կ եք, որ սնունդը պատրաստվում է միայն որոշակի մթերքներից: Ի՞նչ գիտեք այդ մասին:
7. Արդյո՞ք եղել են դեպքեր, որ օգտագործվեն չթույլատրված մթերքներ : Եթե այո, ինչպիսի՞:

Սննդից երեխաների բավարարվածության հարցեր.

8. Ի՞նչ են ասում երեխաները, իրենց դուր գալի՞ս է ուտելիքը, թե՞՝ ոչ: Ինչո՞ւ: Բերե՛ք օրինակներ:
9. Ի՞նչն է դուր գալիս երեխաներին/ ի՞նչը դուր չի գալիս:
10. Երբևէ եղե՞լ է, որ Ձեր երեխան հրաժարվի ուտելիքից: Ինչո՞ւ: Եթե հրաժարվել է՝ որքա՞ն հաճախ է դա լինում: Ի՞նչն է պատճառը:
11. Երբևէ պատահե՞լ է այնպես, որ սնունդ չի պատրաստվել կամ եղել է վատը, ու երեխաները չեն կերել:Բերե՛ք օրինակներ:
12. Արդյո՞ք երեխաները սննդի հետ կապված կարողանում են արտահայտել որևէ բողոք: Ինչպե՞ս: Օրինակ՝ սառն էր, թարմ չէր, համով չէր, քիչ էր և այլն:

Սննդի որակին ու քանակին առնչվող հարցեր

13. Արդյո՞ք եղել են սննդից թունավորման դեպքեր:
14. Սովորաբար երեխաները կո՞ւշտ են մնում: Մանրամասնե՛ք:
15. Արդյո՞ք երեխաների հետ դպրոց ուղարկում եք հավելյալ սնունդ: Եթե այո, ապա՝ ի՞նչ:

16. Ի՞նչ կցանկանայիք փոխել ճաշացանկում: Ինչի՞ց կարելի է հրաժարվել, ի՞նչ ավելացնել:

Մննդի մատուցման և խոհանոցային պայմաններին առնչվող հարցեր.

17. Արդյո՞ք երբևէ գումար հավաքել եք լրացուցիչ սնունդ գնելու կամ այլ նպատակի համար (խոհանոցում ափսե լվանալու, տեխնիկա վերանորոգելու, սպասք գնելու և այլն): Եթե այո, ապա որքա՞ն գումար եք հավաքում: Արդյո՞ք դա պարբերական բնույթ է կրում: Ինչպե՞ս է այդ գումարը ծախսվում:
18. Ինչպե՞ս են պահպանվում խոհանոցում սանիտարահիգիենիկ պայմանները (խոհարարը պահպանում է սանիտարահիգիենիկ պայմանները, կա տաք ջուր, սպասքի լվացումն իրականացվում է ըստ պահանջված կանոնների, ախտահանիչ նյութերի առկայություն): Մանրամասնե՛ք:
19. Արդյո՞ք աթոռների քանակը համապատասխանում է երեխաների քանակին:
20. Ի՞նչ առաջարկներ ունեք, որոնք կբարելավեն դպրոցում երեխաների սննդի որակը և կբարձրացնեն ծրագրի արդյունավետությունը:

Հավելված 6. Ծնողների շրջանում անցկացրած առցանց հարցման հարցաթերթ

1.Քանի՞ երեխա ունեք տարրական դասարաններում սովորող:

1. Մեկ
1. Երկու
2. Երեք
3. Այլ

2. Արդյո՞ք Ձեր երեխան սնվում է դպրոցական սննդով:

1. Այո, միշտ ուտում է
2. Ոչ, ընդհանրապես չի ուտում
3. Երբեմն, ուտում է ըստ նախասիրության
4. Դժվարանում եմ պատասխանել

3. Դպրոցում մատուցված ո՞ր ճաշատեսակներն է հավանում և սնվում երեխան (կարող եք նշել 1-ից ավել տարբերակ):

1. Հաց
2. Պանիր
3. Ձու
4. Բանջարեղենով աղցան
5. Մակարոն
6. Ոսպով և կարտոֆիլով ապուր
7. Բրնձով և հավի կրծքամսով ապուր
8. Լոբով և կարտոֆիլով ապուր
9. Ոլոռով և կարտոֆիլով ապուր
10. Բրնձով և հավի կրծքամսով փլավ
11. Հաճարով փլավ
12. Ոսպով և բրնձով փլավ
13. Հնդկաձավարով փլավ
14. Թարմ կոմպոտ
15. Միրգ/խնձոր
16. Այլ

4. Դպրոցում մատուցված ո՞ր ճաշատեսակներից է հրաժարվում երեխան (կարող եք նշել 1-ից ավել տարբերակ):

1. Հաց
2. Պանիր
3. Ձու
4. Բանջարեղենով աղցան
5. Մակարոն
6. Ոսպով և կարտոֆիլով ապուր
7. Բրնձով և հավի կրծքամսով ապուր
8. Լոբով և կարտոֆիլով ապուր
9. Ոլոռով և կարտոֆիլով ապուր
10. Բրնձով և հավի կրծքամսով փլավ
11. Հաճարով փլավ

12. Ոսպով և բրնձով փլավ
13. Հնդկաձավարով փլավ
14. Թարմ կոմպոտ
15. Միրգ/խնձոր
16. Այլ

5. Արդյո՞ք երեխան կշտանում է դպրոցում տրված սննդով:

1. Այո, միշտ
2. Ոչ, երբեք չի կշտանում
3. Երբեմն
4. Դժվարանում եմ պատասխանել

6. Արդյո՞ք երեխան պահանջում է երկրորդ չափաբաժին սնունդ:

1. Այո, միշտ
2. Այո, շատ հաճախ
3. Ոչ, երբեք երկրորդ չափաբաժին չի պահանջում
4. Երբեմն պահանջում է
5. Դժվարանում եմ պատասխանել

6.1 Եթե այո, ապա՝ ինչո՞ւ:

_____

7. Արդյո՞ք երեխայի հետ դպրոց ուղարկում եք հավելյալ սնունդ:

1. Այո, միշտ ուղարկում եմ
2. Ոչ, դրա կարիքը չկա
3. Երբեմն ուղարկում եմ
4. Դժվարանում եմ պատասխանել

8. Արդյո՞ք Ձեր երեխան սնունդ գնելու համար օգտվում է դպրոցի բուֆետից կամ դպրոցի հարևանությամբ գործող կրպակից :

1. Այո, միշտ
2. Ոչ
3. Երբեմն
4. Դժվարանում եմ պատասխանել

8.1. Ինչո՞ւ

_____

9. Ամսական կտրվածքով որքա՞ն գումար եք տալիս մեկ երեխային հավելյալ սնունդ գնելու համար:

_____

10. Որտեղի՞ց է սովորաբար Ձեր երեխան գնում սնունդ:

1. Դպրոցի բուֆետից
2. Դպրոցի հարևանությամբ գործող կրպակից

3. Չի գնում
4. Դժվարանում եմ պատասխանել
5. Այլ

11. Որքա՞ն գումար են հավաքում ծնողները յուրաքանչյուր ամիս դպրոցական սնունդ ծրագրի համար:

1. Մինչև 500 դրամ
2. 600-900 դրամ
3. 1000 դրամ և ավել
4. Ինձանից գումար չեն վերցնում
5. Դժվարանում եմ պատասխանել

12. Ի՞նչ նպատակով է ծախսվում սննդի համար ծնողների կողմից հավաքված գումարը (կարող եք նշել 1-ից ավել տարբերակ):

1. Հիգիենայի պարագաներ ձեռք բերելու համար
2. Սպասքը թարմացնելու համար
3. Լրացուցիչ սնունդ ձեռք բերելու համար, օրինակ՝ մածուն, սեզոնային մրգեր, չամիչ, չիր, պղպեղ, վարունգ, լոլիկ, թարմ կանաչի, թխվածքաբլիթ,
4. Հիմնական սնունդ ձեռք բերելու համար, օրինակ՝ աղ, բուսական յուղ, բրինձ, գազար, լոբի, խնձոր, կաղամբ, կարմիր բազուկ, կարտոֆիլ, հաճար, հավի միս, հաց, հնդկաձավար, ձու, մակարոն, շաքարավազ, ոլոռ, ոսպ, պանիր, տոմատի մածուկ
5. Խոհանոցի աշխատակազմին աշխատավարձ տալու համար
6. Դժվարանում եմ պատասխանել

13. Ո՞ւմ մոտ է պահվում սննդի համար ծնողների կողմից հավաքված գումարը (կարող եք նշել 1-ից ավել տարբերակ):

1. Տնօրինության
2. Խոհանոցի աշխատակազմի
3. Ծնողական խորհրդի նախագահի/անդամների
4. Ցանկացած ծնողի, ով կցանկանա զբաղվել այդ հարցով
5. Դժվարանում եմ պատասխանել
6. Այլ

14. Ո՞վ կամ ո՞վքեր են կատարում գնումներ ծնողների կողմից հավաքված գումարով (կարող եք նշել 1-ից ավել տարբերակ):

1. Տնօրինությունը
2. Խոհանոցի աշխատակազմը
3. Ծնողական խորհրդի նախագահը/անդամները
4. Ցանկացած ծնող, ով կցանկանա զբաղվել այդ հարցով
5. Դժվարանում եմ պատասխանել

15. Արդյո՞ք Ձեր երեխան ստացել է չոր սննդի փաթեթ COVID 19-ով պայմանավորված:

1. Այո, ստացել է
2. Ոչ, դպրոցահասակ չի եղել
3. Ոչ, որևէ փաթեթ չի ստացել
4. Դժվարանում եմ պատասխանել

16. Քանի՞ անգամ եք ստացել չոր սննդի փաթեթ COVID 19-ով պայմանավորված:

1. Մեկ անգամ
2. Երկու անգամ
3. Երեք և ավելի անգամ
4. Դժվարանում եմ պատասխանել

Հավելված 7. Ընտրված դպրոցների կայքէջեր

1. https://gyumri19.schoolsite.am/ - «Գյումրու N19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
2. http://gyumri29.schools.am/ - «Գյումրու N29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
3. http://gyumri41.schools.am/ - «Գյումրու N41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
4. https://marmashen.schoolsite.am/- «Մարմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
5. https://dilijan2.schoolsite.am/ - «Դիլիջանի N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
6. https://ijevan4.schoolsite.am/ - «Իջևանի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
7. https://haghartsin.schoolsite.am/ - «Հաղարծինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
8. https://teghut-tavush.schoolsite.am/ - «Թեղուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հավելված 8. Մոնիտորինգի համար ընտրված դպրոցներ

Շիրակի մարզ

1. «Գյումրու N19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
2. «Գյումրու N29 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
3. «Գյումրու N41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
4. «Մարմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Տավուշի մարզ

1. «Դիլիջանի N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
2. «Իջևանի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
3. «Հաղարծինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
4. «Թեղուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հավելված 9. ԿՀՆԱԿ հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցության» հիմնարկի կողմից մշակված հիմնական և լրացուցիչ ճաշացանկեր:[16]

Հիմնական ճաշացանկ	Լրացուցիչ ճաշացանկ
Հաց	Սպաս (մածուն, ձավար, բուսական յուղ, ձու)
Աղցան բանջարեղենով (գազար + բուսական յուղ)	Հարիսա (հավ, ձավար, Բուսայուղ)
Աղցան բանջարեղենով (կաղամբ + գազար + բուսական յուղ)	Հարիսա վարսակով հավի մսից (հավ, վարսակ, Բուսայուղ)
Աղցան բանջարեղենով (կաղամբ + կարմիր ճակնդեղ + բուսական յուղ)	Դդումով ապուր (դդում, կարտոֆիլ, գազար, բուսական յուղ)
Աղցան բանջարեղենով (կաղամբ + բուսական յուղ)	բանջարեղեն կտրտած (պղպեղ, վարունգ, լոլիկ, հազար)
Աղցան բանջարեղենով (կարմիր ճակնդեղ + կարտոֆիլ + բուսական յուղ)	Աղցան բանջարեղենով (կաղամբ, գազար, բուսական յուղ)
հաճարով փլավ + բուսական յուղ	Պանիր
Մակարոն + բուսական յուղ	Մածուն
Բրնձով փլավ + հավի կրծքամիս + բուսական յուղ	Ձմեռային միրգ, չիր կամ չամիչ
Հնդկաձավարի փլավ + բուսական յուղ	Ամառային միրգ
Փլավ ոսպով և բրնձով + բուսական յուղ	Թարմ կանաչի
Բրնձով սուպ + հավի կրծքամիս + կարտոֆիլ + բուսական յուղ + տոմատի մածուկ	Թխվածքաբլիթ
Ապուր ոսպով + կարտոֆիլ + բուսական յուղ + տոմատի մածուկ	Վարսակի թխվածքաբլիթ
Ապուր ոլոռով + կարտոֆիլ + բուսական յուղ + տոմատի մածուկ	
Ապուր լոբով + կարտոֆիլ + բուսական յուղ + տոմատի մածուկ	
Միրգ/ խնձոր	
Թարմ կոմպոտ (խնձոր + շաքարավազ)	
Ձու	
Պանիր	
Աղ	

[16] Ճաշացանկերը տրամադրել է ԿԳՄՍ նախարարությունը՝ ի պատասխան «Հարթակ» հետազոտական կենտրոն ՀԿ-ի հարցմանը: